ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈԲԵՐՏ ՄԱՐԿՈՍԻ ԹՈԽՄԱԽՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉԱՇՂԹԱՆ

Ժ.02.01. «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական

գիտությունների դոկտորի գիտական աստիճանի

հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ա. Գալստյան

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Թ.Ս.Շահվերդյան

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ռ.Կ. Սաքապետոյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան **պետական**
լեզվաբանական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012թ. հունիսի 4-ին՝ ժամը 14.00-ին,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 019
մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:
Սեղմագիրը առաքված է 2012թ. ապրիլի 27-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ն. Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ժամանակակից հայոց լեզվի հնչյունական համակարգի քննությունը լեզվաբանական ավանդական մեթոդներով կատարվել է վաղուց: Շուրջ մեկկկես հարյուրամյակի ընթացքում զուտ լսողական մակարդակով քննվել են ժամանակակից հայոց լեզվի հնչյունական համակարգի միավորները, հնչյունների կազմության եղանակները, վանկի, հնչաշղթայի մի շարք զուտ գործնական, դպրոցական ու բուհական դասավանդման ոլորտի հետ կապված խնդիրներ: Ընդ որում շատ դեպքերում նման քննությունը կատարվել է գերազանցապես բուն քերականագիտության ձեռքբերումների հաշվառմամբ: Այդ ընթացքում հայերենի կառուցվածքային առանձնահատկությունները կամ անտեսվել են, կամ բավարար չափով հաշվի չեն առնվել: Հնչյունաբանական հետազոտություններում /մինչև ակադ. էդ. Աղայանի «Գրաբարի քերականություն . հնչյունաբանություն, սինխրոնիա» կոթողային մենագրությունը/ համակարգային և կառուցվածքային երևույթները խորությամբ չեն դիտարկվել:Նշենք նաև, որ հնչյունի և հնչույթի, հնչյունական տարբերակների քննության փորձերը հետևողական բնույթ չեն կրել: Հայերենի հնչյունական համակարգի բուն փորձառական քննությունը սկսվել է անցյալ դարի 60-70-ական թվականներին: Նորագույն ճշգրիտ մեթոդների կիրառման արդյունավետ փորձեր կատարվել են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի փորձառական հնչյունաբանության բաժնում, ուր ատենախոսության հեղինակը աշխատել է անցած դարի յոթանասունական թվականներից սկսած:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի հնչյունական համակարգի բաղկացուցիչ տարրերի ուսումնասիրությամբ զբաղվել են անվանի հայագետներ Հ.Աճառյանը, Մ.Աբեղյանը, Գ.Ղափանցյանը, Է.Աղայանը, Գ.Ջահուկյանը և ուրիշներ: Հնչյունական շղթայի փորձառական ուսումնասիրությունները նորովի բացահայտեցին հայերենի խոսքի առանձնահատկությունները: Եթե նախորդ շրջանի հայագետների ուշադրությունը կենտրոնացվում էր հատկապես հատույթային միավորների ՝ հնչույթի, վանկի, բառի կազմավորման ու հնչյունափոխության հարցերի վրա, ապա փորձառական հնչյունաբանությունը, բացի վերը նշվածներից, առավել նկատելի արդյունքներ է ձեռք բերել նաև խոսքի վերհատույթային միավորների ուսումնասիրության բնագավառում: Հետազոտությունների նյութ են դարձել ինչպես հայերենի հնչույթի, վանկի, հնչաբառի, այնպես էլ շարույթի, հնչադասության , շեշտի, մեղեդայնության,

լայն առումով հնչերանգի մեջ մտնող դադարի, ռիթմի, խոսքի արագության,անհատական խոսքի ֆիզիկական հատկանիշների դրսևորման երևույթները: Հնչյունական շղթայի ուսումնասիրության արդյունքները նորովի են ներկայացնում հայերենի քերականության տեսական մի շարք ըմբռնումներ, նպաստում են հայերենի խոսքի ավտոմատ վերլուծության ու համադրման համար անհրաժեշտ մի շարք խնդիրների պարզաբանմանը: Հայերենի տիպաբանական առանձնահատկությունների բացահայտման համար հնչաշղթայի առավել ծավալուն հատվածների ուսումնասիրության ուղղությամբ աշխատանքները շարունակական պետք է լինեն: Հայագիտության այս բնագավառը սերտորեն առնչվում է բնական ու հասարակական մի շարք գիտություններում կատարվող հետազոտությունների հետ:

Սույն ատենախոսությունը ոչ միայն ի մի է բերում անցած շուրջ չորս տասնամյակի ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքները, այլև որոշակի ընդհանրությունների բացահայտմամբ և համակարգված քննությամբ մշակում է ընդհանրական մոտեցումներ և տիպաբանական բնութագրումներ, ներկայացնում է արդի արևելահայերենի զարգացման ընդհանուր ուղղվածությունը՝ հաշվի առնելով հնչյունական համակարգի հատույթային և վերհատույթային միավորների բնութագրերը, այդ ոլորտում կատարված էական տեղաշարժերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ

Ատենախոսությունը մի կողմից ամփոփում է հայերենի փորձառական հնչյունաբանության բնագավառում մինչ այդ կատարված, թեկուզ և սահմանափակ, ուսումնասիրությունների արդյունքները, մյուս կողմից՝ նորովի է ներկայացնում հայերենի խոսքի ռիթմական միավորների, դադարի, տեմբրի, շեշտի տեսակների բացահայտման փորձառական տվյալները: Երկանդամ հակադրությունների համակարգը ներկայացվում է հայերենի հնչույթների ճշգրտված հատկանիշներով:Հայերենի վանկատիպերի դասակարգման ժամանակ հաշվի են առնվել բաղաձայնական կուտակումներին վերաբերող իրողությունները: Օգտագործվել են քմանկարման, ռենտգեն ու սպեկտրալ վերլուծությունների հիման վրա ստացված արդյունքները: Գրական արևելահայերենի շարույթների քննությունը կատարվել է չորս հաղորդավարների ձայնագրված խոսքի ինտոնոգրաֆային վերլուծության միջոցով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքի նպատակն է ի մի բերել հայերենի խոսքի շղթայի կազմավորման և գործածության լայնածավալ ուսումնասիրությունների արդյունքները, նպաստել հայերենի խոսքի ուսմունքի ամբողջական նկարագրությանը, փորձառական տվյալների համակողմանի ուսումնասիրությամբ օժանդակել հայերենի ինչպես հատույթային միավորների՝ հնչույթի, հնչակապակցությունների, վանկի, այնպես էլ վերհատույթային միավորների՝ շեշտի ու հնչերանգի տեսական խնդիրների պարզաբանմանը, այլև հնչաշղթայում շարույթների ձևավորման ու փոխհարաբերության և սրանցում հնչերանգային բաղադրիչների գործառության լեզվական իմաստաբանական հատկանիշների բացահայտմանը:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Առաջին անգամ ներկայացվում է հայերենի հնչաշղթան իր բոլոր բաղադրիչներով: Քննության են առնվել մինչ այժմ մասնակիորեն դիտարկված շարույթային շեշտի, արձակի և չափածոյի ռիթմի, խոսքի արագության, դադարների , տեմբրի դրսևորման առանձնահատկությունները հայերենի հնչաշղթայում: Նկատի ունենալով հայերենի հնչույթային համակարգի առանձին միավորների կազմավորման տեղաշարժերը՝ նոր մեկնաբանմամբ է ներկայացվել հայերենի բաղաձայնական համակարգի աղյուսակը:Աշխատանքում ոչ միայն ի մի է բերվել նախորդ ուսումնասիրողների փորձառական նյութը, այլև տրվում են հայերենի խոսքի շղթայի ուղղությամբ հեղինակի՝ տարիներ շարունակ կատարած հետազոտությունների արդյունքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսություն մեջ դիտարկված տվյալները մեծապես օգտակար են հայերենի խոսքի ուսմունքի ձևավորման, ուղղախոսության և ուղղագրության կարգավորման, խոսքի շղթայի բաղկացուցիչ տարրերի դպրոցական և բուհական դասավանդման, հայերենը օտարներին ուսուցանելու, խոսքի ավտոմատ տարրալուծման ու համադրման, բժշկության մեջ՝ լսողության ու խոսողության արատների ճանաչման ու բուժման, մեքենական թարգմանության, կապի տեխնիկայի կատարելագործման, անհատի ձայնային հատկանիշների ախտորոշման ու

դասակարգման, հոգեբանության, իրավագիտության, ռոբոտոտեխնիկայի, մեքենական թարգմանության և բազմաթիվ այլ բնագավառների համար:

ՆԱԽԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության և հայոց լեզվի բաժինների համատեղ նիստում և երաշխավորվել պաշտպանության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի **Ներածություն** բաժնում արձանագրվում է, որ հայերենի հնչյունական համակարգի ուսումնասիրության բնագավառում հայ լեզվաբանությունը հասել է որոշակի հաջողությունների: Հայերեն գրավոր խոսքի ձևավորումն արդեն ցույց է տալիս, որ հայերենի այբուբենի հիմնադիրը եղել է ժամանակի մեծագույն հնչույթաբաններից մեկը: «Հայերենի այբուբենի հորինման ժամանակ հնչյունների և դրանք արտահայտող տառերի միջև համարյա թե տարբերություն չի եղել. յուրաքանչյուր տառ ունեցել է իր կայուն արտասանությունը, որը որոշ փոփոխություններ է կրել միայն հետագայում»:/Ս.Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, Հայպետհրատ, Ե.1964,534էջ, էջ 171/: Թեև հայերենի հնչյունական համակարգի մասնակի փոփոխություններ արձանագրվել են ուշ շրջանի քերականագիրների աշխատություններում, սակայն գրական արևելահայերենի հնչյունական համակարգի գիտական լուրջ ուսումնասիրությունները սկսվում են 19-րդ դարի վերջերից: Ակադ. Հ.Աճառյանը առաջինը մեքենական վերլուծության ենթարկեց հայերենի մի շարք բարբառների հնչյունական նյութը՝ դառնալով հայերենի փորձառական հնչյունաբանության հիմնադիրը, իսկ Մ.Աբեղյանը հնչյունաբանությունը ՝ որպես գիտական քերականության նոր ճյուղ, դիտարկեց

1931 թվականին լույս տեսած «Հայոց լեզվի տեսություն» մենագրության մեջ: Հետագայում հնչյունաբանական ուսումնասիրությունները ընթացան մի կողմից զուտ տեսական և մյուս կողմից՝ նաև փորձառական հետազոտությունների ուղղություններով: Ներկա ատենախոսության մեջ հայերենի հնչյունական շղթայի ուսումնասիրությունը կատարվում է պայմանական երկու մակարդակներով՝ հատույթային և վերհատույթային:

Ատենախոսության **առաջին գլուխը** նվիրված է հատույթային մակարդակի քննությանը: Առաջին գլուխը կազմված է 6 ենթագլուխներից, որոնցից առաջին երեքում տրվում են հնչույթների դասակարգումը և ձայնավորական ու բաղաձայնական ենթահամակարգերը, մյուս ենթագլուխներում դիտարկվում են գրության ու արտասանության փոխհարաբերությունը, վանկի կառուցվածքը և երկանդամ հակադրությունների համակարգը:

Չմանրամասնելով հնչույթի ըմբռնման տարբերակները՝ աշխատանքում հիմք է ընդունվում այն տեսակետը, որ հնչույթը հնչական մոտ պատկերներ ունեցող այն ընդհանուրն է, որի գործառույթը բառի ձևավորումն ու իմաստատարբերակիչ դերի սահմանազատումն է: Խոսքը լեզվական հանրության մեջ մտնող մարդկանց գիտակցության մասին է, այսինքն՝ ինքնին վերցրած ֆիզիկական և արտաբերական նմանությունը հարաբերական է և փոխվում է ինչպես լեզվից լեզու, այնպես էլ նույն լեզվական ոլորտում գտնվող անհատից անհատ: Թեև նման հնչական պատկեր կամ արտահայտություն կարելի է ստանալ տարբեր միջոցներով, սակայն կա ցանկացած հնչյունի արտաբերության համար առավել բարենպաստ դիրք, որն էլ դրվում է դասակարգման հիմքում: Չայնավորի համար այն առանձին, ինքնավար արտասանությունն է, բաղաձայնի համար՝ միջձայավորային դիրքը կամ բաց վանկը:

Հայերենի հնչույթային համակարգը կազմված է 36 հնչույթից `6 ձայնավոր և 30 բաղաձայն: Չայնավորական ենթահամակարգը ժամանակի ընթացքում մասնակի փոփոխությունների է ենթարկվել. ժամանակակից գրական արևելահայերենը պահպանել է արմատական ձայնավոր հնչույթները և կորցրել է երկբարբառներն ու երկբարբառակերպները: Հայերենի բոլոր ձայնավորները, չնայած իրենց գործառական բեռնվածությանը ու տարհզորությանը, համակարգի լիիրավ անդամներ են և հնչութային իրենց հատկանիշները պահպանում են հնչաշղթայի բոլոր դրսևորումներում: Բոլոր ձայնավորներն էլ կազմում են նվազագույն իմաստատարբերակիչ հակադրություններ՝ տարբերակելով բառեր և բառաձևեր:

Հայերենի ձայնավորական ենթահամակարգի քննության ժամանակ հիմնականում օգտագործվել են Ա.Խաչատրյանի կողմից ստացված արդյունքները: Հայերենի ձայնավորները չունեն դիրքային սահմանափակումներ, ենթարկվում են որոշակի քանակական փոփոխությունների, որոնք չեն ազդում հիմնական որակի վրա: Ըստ հակադրությունների՝ կարելի է առանձնացնել բերանի ետին մասում կազմավորվող ձայնավորներ՝/օ,ու/, որոնք հակադրվում են բերանի առջևի մասում

կազմավորվողներին՝ /ի,է/: Այս հատկանիշը տարբերակիչ հատկանիշների ցանկում նշվում է որպես ետին/ ոչ ետին կամ առաջնային/ոչ առաջնային հակադրություն:

Ետին ձայնավորները իրենց ներսում ըստ լեզվի բարձրացման աստիճանի կազմում են երկաստիճան հակադրություն՝ վերին՝ **օ**, միջին՝ **ու**:

Առաջին շարքի ձայնավորները իրենց ներսում նույնպես կազմում են երկաստիճան հակադրություն , որտեղ **ի**-ն վերին բարձրացման է, իսկ **է**-ն՝ միջին բարձրացման: Միջին բարձրացման ձայնավորների շարքում իր ուրույն կենտրոնական տեղն է զբաղեցնում **ը**-ն, որն իր դիրքով հակադրվում է ինչպես վերին ու ստորին բարձրացման, այնպես էլ առաջին ու ետին շարքի ձայնավորներին:

Ձայնավորական ենթահամակարգում **ա** ձայնավորը չունի համապատասխան հակադրական եզր, ուստի նրա տեղայնացումը ունի որոշ պայմանականություն: Հետազոտողները գտնում են, որ նրա տեղը ետին շարքից քիչ ավելի առաջ տարածվող մասն է:

Գրական արևելահայերենի ձայնավորների ֆիզիկական բնութագրերը ըստ առաջին երկու ֆորմանտների կարելի է ներկայացնել ավտոմատ հատույթավորման սարքի միջոցով ստացված արդյունքներով.Արժեքները ներկայացվում են հերցերով.

	F1	F2
ա	650	1200
օ	370	1100
է	305	1600
ու	240	945
ի	220	2138
ը	275	1734

Ձայնավորների բաշխման տարածական ոլորտները ըստ առաջին երկու ֆորմանտների կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերում.

F2

2.2 ի

1.8 ը
1.6 է
1.4
1.2 ա
1. օ
0.8 ու
0.6
0.4
0.2
0 0.1 0.2 0.3 0.4 0.5 0.6 0.7 0.8 F1

Իհարկե, ձայնավորների առավել ամբողջական ֆիզիկական բնութագրումների համար առաջին երկու ֆորմանտների արժեքները բավարար չեն: Երբեմն անհրաժեշտ է լինում դիտարկելու երրորդ, չորրորդ և նույնիսկ հինգերորդ ֆորմանտների ցուցանիշները, որոնք պայմանավորված են բերանի խոռոչում լեզվի դիրքի ու վիճակի տարբեր դրսևորումներով, շրթունքների կամ քթի խոռոչի մասնակցության աստիճաններով և հիմնականում բնորոշում են խոսողի հնչարտաբերության անհատական հատկանիշները և այլն: Պետք է ենթադրել, որ երբ լեզուն առաջ է ձգված, ապա համեմատաբար փոքր է առաջին ֆորմանտի հաճախականությունը, և մեծ է երկրորդ ֆորմանտինը:

Գրական արևմտահայերենը և բարբառները, բնականաբար, ունեն արևելահայերենից տարբերվող ձայնավորների ֆիզիկական բնութագրեր:

Հայերենի ձայնավորական ենթահամակարգի բոլոր անդամների համար կարելի է առանձնացնել նվազագույն հակադրական զույգեր: Հակադրական զույգերի տեսակները թվով 15 են. ա-օ՝ հարել-հորել, ա-է՝ սար-սեր, ա-ու՝սար-սուր,ա-ի՝ կար-կիր, ա-ը՝հարել-հըրել, օ-է՝ կոր-կեր, օ-ու՝ տոն-տուն, օ-ի՝ կոր-կիր, օ-ը՝ կոտրել-կըտրել,է-ու՝ բերել-բուրել, է-ի՝ կեր-կիր, է-ը՝ գերել-գըրել, ու-ի՝ մուտք-միտք, ու-ը՝ սուրել-սըրել, ի-ը՝ սիրել-սըրել: Ինչպես ցույց են տալիս բերված հակադրական զույգերը, հայերենի ձայնավորների շարքում Ը-ն հավասարարժեք անդամ է և նրա հնչույթ լինելու փաստը վիճարկելի չէ:

Ինչպես ձայնավորների, այնպես էլ բաղաձայնների կազմավորման ժամանակ նկատելի են արտաբերության տեղի փոփոխություններ, որոնք ունեն որոշակի սահմաններ և չեն խանգարում հնչույթային կազմության էական հատկանիշների դրսևորմանը ու հնչույթների ընկալմանը:

Հայերենի բաղաձայնական ենթահամակարգում հանդես եկող 30 բաղաձայնները բաշխվում են ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ շարքերի: Երբեմն ձայնեղների խմբից առանձնացվում են ձայնորդները, որոնք իրենց ձայնաբանական հատկանիշներով առավել մոտ են ձայնավորներին: Բաղաձայնները հիմնականում

տեղայնացված հնչույթներ են, և նրանց տարբերակային ձևերը գործնականում չեն ազդում սրանցով կազմավորվող իմաստային բաղադրիչների ընկալման վրա:

Լայն առումով՝ բաղաձայնների համար նպատակահարմար է արգելքների ձևը բաշխել փակվածքայինների և նեղվածքայինների միջև, որով էլ պայմանավորված է հպականների և շփականների առանձնացումը:

Արտաբերության տեղը էական նշանակություն ունի բաղաձայնների բնութագրման համար: Սովորաբար այստեղ կարևորվում է ակտիվ օրգանի դերը արտասանական ուղում պատնեշի ստեղծման գործում: Բազմաթիվ դեպքերում այն լեզուն է, որն իր տարբեր մասերով և տարբեր ձևափոխություններով է մասնակցում արտասանական տեղի կազմավորմանը: Հնչույթների կազմավորումները պայմանավորված են ինչպես վանկում և բառում բաղաձայնի գրաված դիրքով, այնպես էլ շրջապատի հնչույթների փոխազդեցությամբ: Սակայն նույնիսկ այն հնչույթները, որոնք ունեն մի քանի տարբերակներ, իրարից չեն տարբերվում հնչույթաբանորեն, քանի որ չունեն իմաստատարբերակիչ գործառություն: Բոլոր դեպքերում նկատի է առնվում, որ հնչույթի իրացման համար կա մեկ հիմնական տարբերակ՝ հնչույթի ուժեղ դիրքը: Լեզվակիրները հնչույթի բոլոր տարբերակները միավորում են մեկ հնչույթի մեջ՝ նկատի ունենալով նրանց հնչարտաբերական լսողական նմանությունները: Այն բոլոր դեպքերում, երբ հնչաշղթայում կատարվում է տվյալ հնչույթի էական հատկանիշների բացակայություն կամ խոսվում է հատկանիշների չեզոքացման մասին, գործ ունենք հնչյունափոխության հետ:

Բաղաձայնների արտասանական տեղի առավել ճշգրիտ նկարագրության համար առանձնացվել են հետևյալ տեսակները. ըստ արտաբերության օրգանների ուղղահայաց դիրքի՝ երկշրթնային, շրթնատամնային, լեզվաշրթնային, միջնատամնային, լեզվաշերտատամնային, ատամնալնդերային, լեզվածայրլնդերային, լեզվաշերտլնդերային, ետլնդերային, քմալնդերային, կոշտքմային, քմային, ետքմային/փափկաքմային/, լեզվակային, երախային, ըմպանային, իսկ ըստ հորիզոնականի՝ շրթնատամնային, լեզվաշրթնային, միջնատամնային, լեզվածայրատամնային, լեզվաշերտատամնային, լեզվածայրլնդերային, լեզվաշերտլնդերային, լեզվածայրկոշտքմային, լեզվաշերտետլնդերային, կոշտ քմային, քմային, ետքմային, լեզվակային, երախային, ըմպանային, կոկորդային:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ լեզվի ձևափոխությունները կարող են ազդել հնչույթի կազմավորման վրա: Այսպես՝ լ և յ ձայնորդները կարելի է որակել որպես լեզվածայրային կամ առաջնալեզվային, մինչդեռ էական նշանակություն է ստանում օդի հոսքի դիմաց կազմվող արգելքի՝ լեզվի զանգվածի ողջ կոնֆիգուրացիան՝ ձևափոխությունը: Հնչաշղթայի վերլուծության ժամանակ կարելի է 10-հազարերորդական վայրկյանի ճշգրտությամբ առանձնացնել նրա մեջ

մտնող միավորների սահմանները: Տևողությամբ ևս շնչեղ խուլերը չեն հակադրվում մյուս բաղաձայններին:

Բաղաձայնների աղյուսակը ըստ կազմավորման տեղի կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

շր	լ 2	մի	լե	լ2	լծ	լ2	լծ	լ2	կո	քմ	ե	լե	եր	ըմ	կո
թն	որթ	ջա	զծ	եր	այ	եր	այ	երտ	շ	այ	տ	զվ	ախ	պա	կո
ատ	նա	տա	այ	տա	րլ	տլ	րկ	ետ	տ	ին	քմ	ա	այ	նա	րդ
ամ	յին	մ	ր	տամ	նդ	նդ	քմ	լնդ	քմ		այ	կ			

| | | | | | | | | | | | | | | |

2. Շրթնատամնային բաղաձայններ՝ վ,ֆ: Այս բաղաձայնները կազմավորվում են օդի հոսանքի ճանապարհը փակող վերին ատամնաշարի և ստորին շրթունքի միջոցով ստեղծված արգելքը հաղթահարելու ժամանակ: Արգելքը լիակատար չէ: Արտասանական ուղու վերջնամասը ունի ճեղքի տեսք:

3. Ատամնային կամ լնդերային բաղաձայններ՝ դ,տ,թ,ն,լ: Այս բաղաձայնների կազմավորմանը գործուն մասնակցություն է ունենում լեզվի ծայրը, որը հպվում կամ մոտենում է վերին ատամնաշարին կամ լնդերքին: Այս բաղաձայնները մտնում են առաջնալեզվայինների խմբի մեջ՝ արգելքի հաղթահարմանը մասնակցող գործուն օրգանի անունով:

4. Ետլնդերային բաղաձայններ՝ ձ, ծ, ց, ս, զ, ր, ռ: Այս հնչյունների արտաբերությանը գործուն մասնակցություն է ունենում լեզվի ծայրը, այս առումով էլ սրանց անվանում են լեզվածայրայիններ և տեղաբաշխում առաջնալեզվայինների մեծ խմբի մեջ: Արտասանության ժամանակ լեզվի ծայրը դիպչում կամ մոտենում է լնդերքի վերջին կամ կոշտ քիմքի սկզբնամասին:

5. Նախաքմային բաղաձայններ՝ ջ,ճ, չ, շ, ժ: Արտաբերությանը գործուն մասնակցություն է ունենում լեզվի առջևի շերտը. այս պատճառով էլ մտնում են առաջնալեզվային բաղաձայնների խմբի մեջ: Արտասանության ժամանակ լեզվի առջեվի մասը կպչում կամ մոտենում է կոշտ քիմքի սկզբնամասին:

6. Քմային բաղաձայն՝ յ: Այս ձայնորդի արտասանության ժամանակ լեզվի և քիմքի միջև ստեղծվում է գոգավորություն՝ ճեղք, որի պատերին քսվելով անցնում է օդի հոսանքը: Գործուն օրգանի անունով անվանում են միջնալեզվային: Նկատենք, որ լ-ի արտաբերության ժամանակ ճեղքեր ստեղծվում են լեզվի եզրերի և բերանի խոռոչի միջև, այդ պատճառով այն անվանում են նաև կողա յին ձայնորդ:

7. Ետքմային բաղաձայններ՝ գ,կ,ք: Արտաբերությանը մասնակցող լեզվի ետին մասը հպվում է քիմքին: Հպական այս բաղաձայնները մտնում են ետնա-լեզվայինների խմբի մեջ:

8. Փափկաքմային բաղաձայններ՝ ղ, խ: Լեզվի ետնամասը մոտենում է փափուկ քիմքին ու լեզվի այդ մասի և երախի միջև կազմված արձագանքարանի պատերին դիպչելով՝ անցնում է օդի հոսանքը Մտնում են ետնալեզվայինների խմբի մեջ:

9. Կոկորդային բաղաձայն՝ հ: Արտաբերության ժամանակ օդի հոսանքի ճանապարհին ստեղծված արգելքը կոկորդի նեղացումն է: Լեզուն իր ողջ զանգվածով սեղմվում է ստորին ծնոտին և առաջացած մեծ ճեղքի պատերին շփվելով անցնում է օդի հոսանքը: Առանց ձայնալարերի մասնակցության ստեղծված աղմուկի պատճառով այն անվանում են հագագային:

Հնչյութները խոսքում ունեն գործածման տարբեր հաճախականություններ, ինչպես նաև իրացման համար նպաստավոր և աննպաստ շրջապատ՝ այսպես կոչված ուժեղ և թույլ դիրքեր: Սովորաբար խոսքի սկիզբը և շեշտակիր վանկը ուժեղ

դիրք են, իսկ բառավերջը կամ նախադասության ավարտը՝ թույլ: Առանձին հնչույթներ ունեն նաև գործածության սահմանափակումներ: Այսպես, բառասկիզբը թույլ դիրք է ռ, ր ձայնորդների համար, բառավերջը՝ ր-ից հետո ձայնեղ հպականների և հ-ի համար:

Ր-ից հետո բաղաձայնի՝ ձայնեղի շնչեղ խլացման օրենքը տարածվել է ոչ միայն հպականների, այլև հպաշփականների վրա, ինչպես արձակ/արցակ, բարձ/բարց, դարձ/դարց, խուրձ/խուրց, հանդերձ/հանդերց, որձ/վօրց, վարձ/վարց, փորձ/փօրց, արջ/առչ, վերջ/վեռչ, որջ/վօռչ, թրջել/թռչել և սրանց կողքին կան բառեր, որոնց տարբերակային արտաբերությունը գրական կանոնական հնչման խաթարում չի համարվում՝ լորձ-լօրց, մերձ-մերց, անուրջ-անուրչ, վրձին-վրցին, արձան-արցան մինչդեռ՝ բաղարջ, հաղարջ, շուրջ բառերը ունեն գերազանցապես ձայնեղ արտաբերություն:

Լեզվի գոյության ողջ ժամանակահատվածում եղել են բառերի արտասանության տարբեր ձևեր: Գրական կանոնական ձևերի հաստատումը ընթացել է պայքարի միջոցով: Լեզվի գրական կանոնարկման այդ ուղին չի ավարտվել. այն անընդհատ ընթացք է, և հաճախ այս կամ այն ձևի համար գրական լեզուն հանդուրժում է նրանց երկակի արտասանական տարբերակների գոյությունը: Այնպես որ գրական պետք է համարել ինչպես համերգ/համէրգ/, այնպես էլ /համէրք/ հնչմամբ բառերի արտասանական իրողությունները: Բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ լեզվակիրները ճանաչում են բառը, գիտեն նրա իմաստը, և որ տարբերակային ձևերում հանդես չեն գալիս հայերենի հնչույթային համակարգին խորթ, անճանաչելի հնչույթներ, այլ պարզապես մի հնչույթին փոխարինում է մեկ այլ՝ արտաբերությամբ մոտ, հարաբերակից հնչույթ: Հնչյունական շղթայում սրանք հակադրական զույգեր չեն կազմում և հեշտությամբ տարորոշվում են համատեքստում: Պարզ է, որ այս դեպքում գործում է արտասանությունը գրությանը համապատասխանեցնելու միտումը, որը երբեմն հակասության մեջ է մտնում գրական կանոնական համարվող ավանդական հնչարտաբերության հետ:

Հնչույթները խոսքում ունեն տարբեր հաճախականություն, այսինքն՝ տարբեր են նրանց գործառական հատկանիշները: Հայերենի հնչաշղթայում ավելի հաճախական են ձայնավորներն ու ձայնորդները՝ մյուս բաղաձայնների համեմատությամբ: Գեղարվեստական գրականության մոտ 40 հազար նիշ պարունակող տեքստերում հայերենի հնչույթների հաճախական արժեքները տոկոսներով ունեն հետևյալ արդյունքները՝ ա-14.75, է-9.35, ն-8.64, ր-7.74, ի-5.50, մ-4.64, ու-4.59, ը-4.57, ս-3.43 , յ-3.43, կ-3.42, օ-3.13, վ-3.11, տ-2.93, լ-2.14, g-1.95, ք-1.86, h-1.70, թ-1.38, բ-1.37, չ-1.21, պ-1.08, գ-1.00, դ-0.99, խ-0.99, ծ-0.89, ղ-0.86, շ-0.82, ռ-0.70, զ-0.65, փ-0.44, ֆ-0.29, ձ-0.28, ջ-0.25, ժ-0.25, ճ-0.16:

Ստացված արդյունքները հիմնականում համընկնում են մինչ այդ հայ գիտնականների՝ Էդ.Աղայանի, Ա.Սարգսյանի և Ա.Խաչատրյանի կողմից կատարված հետազոտությունների փաստերին:

Հնչույթները, ըստ բառերում գրված դիրքի, ունեն տարբեր հաճախական արժեքներ: Այսպես՝ ր-ն առավել հաճախական է բառամիջում և բառավերջում, հ-ն՝ բառասկզբում,յ-ն՝ բառամիջում,իսկ խուլ բաղաձայնները՝ բառավերջում:

Հայերենի հնչույթների դասակարգում կատարվել է ըստ երկանդամ հակադրությունների համակարգի: Երկանդամ հակադրությունները ցույց են տալիս, որ հնչույթները միմյանցից տարբերվում են առնվազն մեկ տարբերակիչ հատկանիշով: Միայն մեկ տարբերակիչ հատկանիշով զանազանվող հնչույթները կազմում են նվազագույն հակադրական հնչույթային շարքեր,ինչպես հայերենի բ-պ-փ, դ-տ-թ, գ-կ-ք, ձ-ծ-ց, ջ-ճ-չ հնչույթները, ուր շարքի յուրաքանչյուր հաջորդական անդամ մյուսից տարբերվում է մեկ տարբերակիչ հատկանիշով, մինչդեռ եզրային անդամները միմյանցից՝ երկու հատկանիշով: Հայերենի բաղաձայնական ենթահամակարգը կարելի է ներկայացնել հետևյալ երկանդամ հակադրական զույգերով՝ երկշրթնային բաղաձայններ՝բ,պ,փ, **բար-պար, բառ-փառ, պայտ-փայտ,** ատամնային կամ լնդերային բաղաձայններ՝ դ,տ,թ, **դեր-տեր-թեր**. հպաշփականներ ձ,ծ,ց, **ձույլ-ծույլ, ձող-ցող, ծոպ-ցոփ**. քմային հպաշփականներ՝ ջ,ճ,չ, **ջան-ճան-չան,** շրթնատամնային բաղաձայններ՝ վ,ֆ, **ֆարս-վարս**, լնդերային շփականներ՝ ս,զ, **սուտ-զուտ**, քմային շփականներ՝ շ,ժ; **շահ-ժահ,** ետքմային կոկորդային շփականներ ղ-խ, **ղալաթ-խալաթ**, ռնգային ձայնորդներ՝ մ,ն, **մոր-նոր**, թրթռուն ձայնորդներ՝ ռ,ր, **արու-առու**, կողային կամ ճեղքային ձայնորդներ՝ լ,յ, **լար-յար**:Կողային ձայնորդները մերձավոր հակադրական զույգեր չեն կազմում, քանի որ սրանց կազմավորման եղանակները տարբեր են, և հնչաշղթայում կարող են հանդես գալ նաև հարևանությամբ, ինչպես՝ **դույլ-թույլ**: Կոկորդային շփական հ բաղաձայնը նույնպես չունի իր մերձավոր հակադրական զույգը և հակադրություններ կարող է կազմել բաղաձայնական ենթահամակարգի այլ միավորների և զրո ձևույթի հետ, ինչպես **հող-դող, հոր-կոր, հայր-այր** և այլն: Պատմականորեն **ղ** և **խ** բաղաձայնները նույնպես մերձավոր հակադրություն չեն կազմել, սրանք ևս կարող էին հանդես գալ հարևանությամբ/հմմտ **աղխ, բաղխել, ուղխ** կազմությունները/:Մնացած բոլոր դեպքերում մերձավոր հակադրություն կազմող միավորները բաշխվում են տարբեր վանկերի վրա, ինչպես ռնգայինները՝ մ/ն-ն, **հիմնական** բառում կամ հպականները՝տ/թ-ն, **վատթար** բառում:

Լեզուների զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ հնչույթային համակարգը քերականության մյուս բաժինների համեմատությամբ ցուցաբերում է առավել մեծ կայունություն, որի շնորհիվ էլ կարողանում է իրականացնել հաղորդակցության իր գլխավոր գործառույթը՝ որոշակի հասարակության մեջ պատմական երկարատև ժամանակաշրջանում ապահովելով տարբեր սերունդների

կապը: Սա, իհարկե, չի նշանակում, թե դարերի ընթացքում լեզվի հնչույթային համակարգը չի ենթարկվել փոփոխությունների, սակայն այդ փոփոխությունները տեղի են ունեցել շատ դանդաղ, լեզվակիրների համար գրեթե աննկատելի: Սովորաբար հնչույթային համակարգում տեղաշարժերը լեզվի զարգացման արդյունք են, թեև բացառված չէ նաև արտաքին ազդեցությունը:

Այսպես, գրական հայերենի ձևավորման վաղ ժամանակաշրջանում երկրի տարանջատումը երկու մասի՝ Տաճկահայաստանի և մյուս կողմից Ռուսահայաստանի, մեծապես ազդեցին հայերենի երկու գրական լեզուների ձևավորման վրա: Սակայն դրանցից յուրաքանչյուրը ուներ հստակ տարբերակիչ համակարգ, և նրանց տարատեսակները գործում էին տեղական բարբառների հետ կողք կողքի: Միաժամանակ դեռևս կրոնամշակութային բնագավառում իր դիրքերը չէր զիջել գրաբարը: Թեև գրաբարը համարվում էր բարձր խավի լեզու, սակայն արդեն քիչ թե շատ նոր բնագծեր գրված գրականը ավելի ու ավելի էր տարածվում և դառնում ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր հաղորդակցման լեզու՝ բնականաբար իր մեջ ներառելով ինչպես գրաբարի, այնպես էլ բարբառների բազմաթիվ տարրեր: Հնչույթային համակարգը, լիովին յուրացնելով գրաբարյանը, միաժամանակ կարողացել էր ամրագրել գրավոր աղբյուրներում չսրբագրված, սակայն միջին դարերում արդեն գործառվող ֆ հնչույթը: Լեզվի ներքին զարգացման կանոններով, ինչպես և զգալիորեն արտաքին փոխառությունների հետևանքով փ-ի ֆ և ղ-ի կոշտ տարբերակի նույնացումը լ-ի հետ համընդհանուր տարածում էին գտնում: Այսպես՝ ֆայտոն և ոչ թե փայտոն, Ալեքսանդր և ոչ Աղեքսանդր, Կլեոպատրիա և ոչ Կղեոպատրիա, գալլերեն և ոչ գաղղերեն և այլն: Նույնիմաստ *գաղջ* և *գոլ* բառային զույգից , որը միաժամանակ գրական հայերենի գործուն բառապաշարի տարր է, էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» կա *գաղջ* բառի 7 կազմություն՝ *գոլ-ի* 27 –ի դիմաց: Սրանք բնութագրում են նաև հետևյալ տարբերությունը. եթե *գաղջ* բառը ունի գրքային գործածություն, ապա *գոլ-ը* ավելի առտնին, ժողովրդախոսակցական և կենսունակ բառակազմական ձև է: Թեև հին շրջանի բազմաթիվ փոխառություններ ամրագրվել են լեզվում և չեն ենթարկվում հնչյունական նոր կանոններին, ասենք փիլիսոփան չի փոխարինվում ֆիլոսոֆ-ով, սակայն կան դեպքեր, երբ լեզվամշակույթային սերտ կապերի և սոցիալական գործոնների ազդեցությամբ առանձին բառային միավորներ ենթարկվում են ճշգրտման, ասենք՝ Տփղիս-Թիվլիզ- Թիֆլիս-Թբիլիսի կամ Աշխաբադ-Աշգաբադ, Կիրգիզստան-Ղրղզստան, Կամբոջա-Կամպուչիա և այլն : Նման կարգի ճշգրտումներ միշտ չէ, որ նպատակահարմար են, քանի որ այժմ սխալ համարվող ձևերից շատերը, եթե գործածվել են երկարատև ժամանակաշրջանում , ձեռք են բերել օրինական լինելու կարգավիճակ: Հետագայում այդ տարընթերցումները կարող են լեզվում իմաստային խառնաշփոթության պատճառ դառնալ հատկապես այն ձևերում, որոնք

երկարատև գործածության հետևանքով «քաղաքացիություն» են ստացել: Ասենք այժմ ոչ ոք հայերեն խոսքում չի գործածի Պաղի՝ Փարիզի փոխարեն:

Գրական լեզվի հետագա կանոնավորման գործընթացում նկատվում է ձայնավորների գործառական ծանրաբեռնվածության կամ չթեքված բառաձևերի աճ՝ ժողովրդախոսակցական նորմի համեմատությամբ՝ մատիտ-մատտի-մատիտի, կոշիկ-կոշկի-կոշիկի: Այսպես, եթե կանոնական է *ժողովրդի* ձևը, ապա անկանոն է *ժողովրդները*, գրականը՝ *ժողովուրդներ*: Այսպես և ժողովրդախոսակցական են հնչյունափոխված *քրդեր, ռսներ, թրքեր* ձևերը՝ գրական *քուրդեր, ռուսներ, թուրքեր* ձևերի համեմատությամբ: Գրական կանոնական համարվող որոշ կազմություններ խորթ են ժողովրդախոսակցական լեզվին, երբեմն խանգարում են բառային իմաստների ճշգրիտ տարբերակմանը՝ ասենք՝ ող/վօղ/ չունեցող անող/անվօղ/ կազմությունը չի կարող լինել անող/անօղ/: Նույնը՝ անոտ/անվօտ/ /անօտ/-ի փոխարեն: Այսպես չորոշել/չըվօրօշել/ հնչման փոխարեն առաջարկվող /չօրօշել/ հնչման դեպքում բառասկզբի ուժեղ դիրքից դուրս են ընկնում երկու՝ըվ, հնչույթներ, որոնք հնչյունական օրենքներով կատարված փոփոխություններ չեն, այլ պայմանավորված են գրային մակարդակով:

Գործնական լուրջ խնդիրներ են առաջանում փոխառյալ անունների արևելահայերեն և արևմտահայերեն տառադարձման և գրադարձման ժամանակ՝ հատկապես հպականների՝ արևելահայերենի եռաշարք և արևմտահայերենի երկշարք հակադրության հետևանքով: Ասենք՝ ռուսերենի միջոցով արևելահայերենին անցած *տեստ* բառը գործածվում էր պարզ խուլերով, արևմտահայերենի *թեսթ* բառը, թերևս փոխադրված անգլերենից՝ շնչեղ խուլ գրությամբ, մինչև որ արևելահայերենում ամրագրվեց *թեստ* գրելաձևը՝ խառը գրադարձությամբ: Նման ձևով գրության մեջ սկսում են գործառվել Կլինտոն- Քլինտոն- Քլինթոն, Կեյպտաուն- Քեյպտաուն- Քեյփթաուն կամ Սեպուհ-Սեբուհ- Սեփուհ կազմությունները:

Հնչյունական փոփոխությունները պայմանավորված են ոչ միայն համակարգերի տարբերություններով, այլև այդ փոխառությունների անմիջական կամ միջնորդավորված լինելով: Ներկայումս տեղեկատվական միջոցների աննախընթաց զարգացման պայմաններում մեծապես կարևորվում է տարբեր լեզուներից կատարվող փոխառությունների համար միօրինակացված սկզբունքների ընդունումը: Այս բնագավառում առաջին լուրջ ներդրումը Ա.Խաչատրյանի կողմից դեռևս 1973թ. ՀՀ ԳԱ «Լրաբեր» հանդեսում ռուսերենով հրատարակված «Հայերենի հնչույթային համակարգը և տառադարձման մի քանի հարցեր» հոդվածն է: Հեղինակը հնչյունական համապատասխանություններ է գտնում մի կողմից հայերենի և մյուս կողմից՝ Մեյե-Հյուբշմանի ու Միջազգային հնչյունաբանական ասոցիացիայի տառադարձման աղյուսակների, ինչպես նաև ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի, իտալերենի հնչյունական համակարգերի մերձավոր միավորների միջև: Այսպես, եթե անգլերենի հնչութային համակարգը խլազուրկ է, իսկ ռուսերենը

չունի շնչեղ խուլ շարքը, ապա սրանք առանձնակի դժվարություն չեն ներկայացնում արևելահայերենի համար, որտեղ կան երկու շարքերն էլ ներկայացնող միավորներ, բարդությունը թերևս այդ լեզուներին բնորոշ առանձնահատուկ հնչույթներն են, ինչպես օրինակ,անգլերենի th ,w , կամ ռուսերենի քմային բաղաձայնները: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում գրության և արտասանության փոխհարաբերությունը: Բնականաբար, առաջնությունը պատկանում է հնչմանը, քանի որ գրայինը սկզբնապես պայմանավորել է հնչաշղթայի/ ներառյալ նաև ներքին խոսքի/ վերարտադրությունը սրանց բնորոշող նշաններով: Իհարկե, երբեմն գրային եղանակով ներկայացվող խոսքը ինքնին դրսևորում է բովանդակության բացահայտման միայն իրեն հատուկ գործառություն, սակայն նման կիրառությունները համեմատաբար սակավ գործածություն ունեն: Մեզանում շատ հաճախ գրային մակարդակում ընդունելի են համարվում այնպիսի կիրառություններ,որոնք պայմանավորված են ոչ թե հնչման, այլ բովանդակության վերլուծության իմացական կաղապարներով: Նման մոտեցումը ստեղծում է տեքստում կետադրության նշանների կիրառության և հնչարտաբերության նկատելի տարբերություններ: Պարզ է, որ կետադրության նշանի գործածությունը առաջին հերթին միտված է տեքստի երկվության բացահայտմանը: Այսպես՝ **Տան մեծ որդին կատաղած բարոյագետներից մեկի հետ կռվի բռնվեց** նախադասության մեջ , եթե բութի նշանը չդրվի **կատաղած** բառի վրա. ապա կարող է հասկացվել, որ ոչ թե որդին, այլ բարոյագետներից մեկն է կատաղածը: Երկվություն, իհարկե, չի առաջանում կենդանի խոսքում , քանի որ բացի համատեքստից էական դեր կարող են խաղալ ինչպես վերհատույթային բաղադրիչները, այնպես էլ իրադրությամբ պայմանավորված հարալեզվական նշանները:

Ինչպես հայտնի է, հնչույթները խոսքում ունեն կապակցելիության որոշակի սահմանափակումներ, այսինքն՝ ոչ բոլոր հնչույթները վանկում կարող են հաջորդել միմյանց: Հնչաշղթայում հարևանությամբ հանդես եկող հնչյունները ազդում են միմյանց վրա, փոխում հնչական ինչ-ինչ հատկանիշներ, քանի որ արտասանական մի վիճակից մյուսին անցնելու ժամանակ հնչումը չի դադարում, և արտաբերական օրգանները հաջորդ հնչյունի արտաբերման դիրքն են ընդունում հենց հնչման ժամանակ: Արտասանության նվազագույն միավորը վանկն է: Սա նշանակում է, որ արտաբերվում են ոչ թե առանձին հնչույթները/ եթե, իհարկե, վանկը կազմված չէ մեկ ձայնավորից/, այլ հնչյունների խմբերը,որոնք հայերենում միավորվում են մեկ ձայնավորի շուրջը. հայերենում ձայնորդները վանկարար չեն: Ամեն մի վանկ հնչյունների յուրատիպ հատկանիշներով իրար միահյուսված մի ամբողջություն է, որի կարևորագույն հատկանիշներից է օդի մեկ մղումով արտաբերությունը: Վանկերը բաժանվում են երկու տեսակի՝ բաց և փակ: Բացը միայն ձայնավորից կազմված կամ ձայնավորով վերջացող վանկն է, ինչպես՝ **ա-ռու, գե-րի**, փակը՝ բաղաձայնով վերջացող վանկը , ինչպես՝ **առ-վակ, խըն-ձոր**:

Հայերենում, ինչպես և բազմաթիվ այլ լեզուներում, արտասանական առավել տարածված վանկատիպը բաղաձայն + ձայնավոր հաջորդականությունն է, այսինքն ԲՁ տիպի բաց վանկը, ինչպես՝ **կա-տու, պա-պա, բա-րի, տա-րի**, մինչդեռ պակաս հաճախական են բաղաձայնական կուտակումներով և փակ վանկերը՝ **ստը-կամիտ, պատմ-վածք**: Հայերենի հնչյունական շղթայում, ինչպես դիտարկել է ակադ. Գ. Ջահուկյանը, ձայնավորի սկզբից կամ վերջից կարող են մեկ վանկում հանդես գալ առավելագույնը երեք բաղաձայն: Խոսքը, բնականաբար, չի վերաբերում գրույթներին, որոնք առանձին դեպքերում **ը** ձայնավորի չգրանցման հետևանքով թողնում են բաղաձայնների խճողման պատկեր գրային մակարդակում՝՝ **խլրտխլրտալ, չրխկչրխկալ**:

Հայերենում ԲՁ ամենալայն գործածություն ունեցող վանկատիպից հետո երկրորդ տարածված վանկատիպը բաղաձայն + ձայնավոր + բաղաձայն (ԲՁԲ) վանկատիպն է՝ **գետ**, **հաց**, **մայ-րիկ**. **բան-ջար**: Այս երկու վանկատիպերին բաժին է հասնում տեքստում հանդես եկող վանկային բոլոր կազմությունների 9/10 մասը, մինչդեռ մնացած 10 տոկոսը բաժին է ընկնում մյուս բոլոր վանկատիպերին: Սա պետք է դիտել, որպես սովորական, հաճախական կիրառության արձանագրություն, որը պահպանվում է ինչպես գրավոր տեքստերում, այնպես էլ առօրյա- խոսակցական լեզվում: Սակայն կարելի է անհրաժեշտ ճիգերի գործադրման շնորհիվ փոխել ինչպես վանկերի, այնպես էլ առանձին հնչյունների հաճախական գործածությունների հարաբերությունը: Լեզվական խաղերի ժամանակ հնարավոր է որոշակիորեն ընտրված տեքստում բացառել հայերենի նույնիսկ ամենահաճախական գործածություն ունեցող **ա** ձայնավորի գործառությունը: Նման կազմությունները ամենևին չեն ազդում լեզվի կառուցվածքային հատկանիշների , ընդհանրությունների բացահայտման վրա, այլ ընդգծում են լեզվական համակարգերի հնարավորությունների բազմազանությունը:

Լեզուն իր գոյության ընթացքում անընդհատ իր շրջապտույտի մեջ է առնում նորանոր բառեր ու բառակապակցություններ: Ընդլայնվում են նաև նրա արտասանական հնարավորությունները՝ հատկապես փոխառությունների հաշվին: Երբեմնի հազվադեպ կիրառությունները սկսում են դառնալ հաճախական՝ բառապաշարում նոր կազմությունների գործածության հետևանքով: Հաշվի առնելով հայերենի բնիկ և փոխառյալ բառերի գործառության ներկա արտաբերական հնարավորությունները՝ կարելի է նրանցում առանձնացնել 16 վանկատիպ՝ 1) Ձ, 2) ԲՁ, 3) ԲԲՁ, 4) ԲԲԲՁ, 5) ՁԲ, 6) ՁԲԲ, 7) ՁԲԲԲ, 8) ԲՁԲ, 9) ԲՁԲԲ, 10) ԲՁԲԲԲ, 11) ԲԲՁԲ, 12) ԲԲՁԲԲ, 13) ԲԲՁԲԲԲ, 14) ԲԲԲՁԲ, 15) ԲԲԲՁԲԲ, 16) ԲԲԲՁԲԲԲ:

Բոլոր հնարավոր վանկատիպերի արձանագրումը փաստորեն ակադեմիկոս Գ.Բ. Ջահուկյանի առաջարկած հայերենի վանկատման ընդհանուր կաղապարի՝ /Բ/Բ/Բ Ձ Բ/Բ/Բ/ լիակատար գործառությունն է, երբ լեզվում հանդես եկող բոլոր տարբերակային ձևերը դիտարկվում են որպես հաստատված և ամրապնդված

օրինաչափություն: Բաղաձայնական կուտակումներով սկսվող որոշ վանկատիպերի գոյությունը առանձին հայագետներ հակված են դիտելու որպես գրական կանոնական նորմերի խախտումներ ու դեռևս չամրապնդված միտումներ: Բաղաձայնական կուտակումներով բառաձևերի գործածությունը առավել հատուկ է արևելահայ երիտասարդ սերնդի խոսքին, միաժամանակ արագ տեմպով ընթացող խոսակցությանը:

Հայերենի բնորոշ առանձնահատկություններից մեկը պետք է համարել երկբարբառներ չունենալը: Փաստորեն հնչյունական շղթայում, երբ հանդիպում են երկու ձայնավոր հնչյուններ, սրանք բաժանվում են տարբեր վանկերի: Ինքը ձայնավորը կարող է առանձին վանկ կազմել, ինչպես՝ ՝ **ա-ռու**, **ա-տամ, ա-թոռ, օ-տար, բա-ռ-բաբ, լա-ռ**, (նկատենք, որ այստեղ կից ձայնավորների մեջ **ա**-ից հետո չի լսվում **յ** բաղաձայնը), նույնն է նաև **կակա-ռ, բռ-ա, Մա-ռ** և այլն: Բառավերջյան դիրքում ձայնավորով վերջացող բառերում միահնչյուն վանկի կազմությունը հատուկ անուններում պայմանավորված է կոչականի ընդգծված կիրառությամբ: Այսպես կարող են հնչվել՝ **Մարի-ա, Լի-ա, Ռոմե-ռ:** Հնչյունական շղթայի այլ դիրքերում կից ձայնավորներից կազմված կապակցության մեջ հաճախ գործառվում է **յ** ձայնորդը, երբեմն էլ ձայնավորներից մեկը վերածվում է **յ**-ի՝ **ռադիո (ռադյո), այժմեական (այժմեյական), Մարիա (Մարիյա, Մարյա), հրեական (հրեյական)** և այլն:

Նշելով, որ հնչույթային-հնչույթաբանական վերլուծության առումով հայերենը խուսափում է երկբարբառներից, միաժամանակ կարող ենք արձանագրել, որ խոսքային մակարդակում երկբարբառների միավանկ արտաբերությունը բոլորովին էլ խորթ չէ լեզվակիրներին, մանավանդ որ աստիճանաբար նկատելի թիվ են կազմում օտար լեզուներից կատարված փոխառությունները, միաժամանակ մեծանում է այդ լեզուներին տիրապետողների քանակը: Այստեղ տեղին է ասել, թե ովքեր կամ որ խավը չի կարող արտասանել նման կապակցությունները: Միաժամանակ կարելի է արձանագրել, որ խիստ հազվադեպ են այն անձինք, որոնք **կակաո** բառը հնչում են **կակավօ**, կամ **աուտը՝ ավուտ**, **աերոմեխանիկան՝ այրօմեխանիկա**, **դոնժուանությունը՝ դօնժվանություն***:*

Գրագիտության զարգացմանը զուգահեռ հաճախ փոխվում են առանձին բառերի արտաբերության կանոնները: Սա ամենից ավելի նկատելի է նոր և նորագույն փոխառությունների դեպքում, երբ բառերը բառապաշար են մուտք գործում հիմնականում գրային ճանապարհով, որն էլ երբեմն իր հետքն է թողնում մինչ այդ ամրագրված նորմերի վրա:

Եթե վանկավերջում երեք բաղաձայնով վանկերի գոյությունը առարկություններ չի հարուցում, ապա նույնը չի կարելի ասել բառասկզբական բաղաձայնակա**ն** կուտակումների մասին: Նշենք,որ հայերենը հնդեվրոպական այլ լեզուների նման կարող է հնչարտաբերել մինչև երեք բաղաձայնով սկսվող որոշ կարգի բառեր: Նման հնչարտաբերում եղել է ինչպես հին հայերենի շրջանում,

այնպես էլ ժամանակակից գրական արևելահայերենում: Բառասկզբի բաղաձայնական կուտակումներից խուսափելու միտումը թերևս ավելի շատ նկատելի է հայերենի առավելապես արևմտյան բարբառներում, որն էլ հավանաբար պայմանավորված է արևելյան լեզուների ազդեցությանբ: Ընդհանուր առմամբ բառասկզբի բաղաձայնական կուտակումներից խուսափելը բնորոշ է արևմտահայ գրական լեզվին, ուր օրինաչափ է ձայնավորական հենարանի գործածությունը, որն էլ հենց երկու գրականների տիպաբանական տարբերակային հատկանիշներից մեկն է: Թեև արևմտահայ բոլոր գաղթօջախներում չէ, որ կա միասնական հնչարտաբերություն:

Աշխատանքում քննության առարկա են դարձել գրության և արտասանության փոխհարաբերության հարցերը Հաճախ գրային մակարդակը, ընդունված կետադրության կանոնների համաձայն, նկատելի տարբերություններ է հարուցում արտասանվածքի համարժեք վերարտադրության համար: Սա ունի իր պատճառաբանությունը: Գրությունը, որքան էլ մեծացնի կետադրության նշանների թիվն ու գործածության կանոնները, չի կարող ներկայացնել բանավոր խոսքի ողջ հարստությունը: Այլ լեզուներում գործառվող կետադրական նշանների համեմատությամբ հայերենում դրանք անհամեմատ շատ են: Երբեմն գրության մեջ գործածվող այդ նշանները հակասության մեջ են մտնում հնչարտաբերության հետ: Մասնավորապես սա վերաբերում է բարդ համադասական նախադասությունները միավորող և, ու շաղկապներից առաջ ստորակետի գործածությանը, երբ փոխվում է ենթական: Մինչդեռ բոլոր դեպքերում չէ, որ այստեղ գոյություն ունի հնչարտաբերության ընդհատում կամ տրոհում:

Հայերենի հատույթային մակարդակի միավորների բացահայտման համար էական նշանակություն ունի դրանց դիտարկումը երկանդամ հակադրությունների սկզբունքով:Հակադրությունների քննարկվող համակարգում հաշվի են առնված ինչպես հնչյունների կազմախոսական, այնպես էլ առաջին հերթին ձայնաբանական հատկանիշները: Հայ լեզվաբանները 12 երկանդամ հակադրությունների համակարգը ներկայացնում են որոշակի ճշգրտումներով՝ հաշվի առնելով հայերենի հնչական առանձնահատկությունները: Այսպես, ակադ. էդ. Աղայանը հայերենի հնչույթային համակարգի ամբողջական նկարագիրը ստանալու համար դիտարկում է նաև հպաշփականություն-ոչ հպաշփականություն հակադրությունը:

Տարբերակիչ հատկանիշների համակարգը լեզվի հնչյունաբանական ուսումնասիրության վերջնական եզրային համակարգն է: Եթե հնչույթային մակարդակի միավորներին կարելի է հասնել արտասանվածքի հատույթավորման միջոցով, ապա տարբերակիչ հատկանիշների ըմբռնումը կայանում է հնչույթների տարրալուծման մակարդակում, որտեղ հատկանիշները հանդես չեն գալիս շարքում հաջորդաբար, այլ միաձուլված են մեկ հնչույթի մեջ: Երկանդամ հակադրությունների

համակարգը լեզվի հնչույթային համակարգի միավորների բացահայտման լեզվաբանական դիտարկում է և չի նույնանում տարրույթային մակարդակին:

Հայտնի է, որ հնչույթի ըմբռնումը լեզվաբանության բարդ խնդիրներից մեկն է: Խոսքային շղթայի բաժանումը հնչույթների զուտ լեզվաբանական մոտեցում է: Հնչաշղթան չի բաժանվում առանձին, ինքնուրույն միավորների: Ճիշտ է, հնչյունական շղթայում շատ դժվար է որոշել հնչույթների սահմանները, սակայն կարելի է գտնել առանձին հատվածներ, որոնք որոշակիորեն վերաբերում են այս կամ այն հնչույթին: Սովորաբար հնչյունական ալիքում կարելի է առանձնացնել նույնական հատկանիշներով տարբերվող հատույթներ, որոնց միջնամասն էլ հենց հնչույթի կենտրոնն է: Հնչաշղթայում հաջորդաբար առաջացող միավորները հնչույթներն են, որոնց վրա ասես ավելանում են առոգանական երևույթները՝ տոն, տեմբր, ուժգնություն, տևողություն, որոնց ընդունված է անվանել վերհատույթային միավորներ, երբեմն սրանց անվանում են նաև երկրորդական հնչույթներ: Այսպիսով, վերհատույթային միավորները փաստորեն հնչերանգի բաղադրիչներն են:

Աշխատության **երկրորդ գլուխը,** որը բաժանված է 8 ենթաբաժնի, նվիրված է հայերենի վերհատույթային միավորների քննությանը: Դրանք այն միավորներն են, որոնք ձևավորում են հնչերանգը:

Հնչերանգի վերաբերյալ լեզվաբանական գրականության մեջ կա հիմնականում երկու մոտեցում՝ լայն և նեղ: Առաջին մոտեցման դեպքում հնչերանգի մեջ դիտարկում են առոգանական ամենատարբեր երևույթները՝ հիմնական տոն, տեմպ, կցույթի տեսակներ, ինտենսիվություն, ռիթմական կառուցվածք, մինչդեռ նեղ մոտեցման դեպքում այն մեղեդին է՝ տոնի փոփոխությունը:

Մեր մոտեցումը հնչերանգի ավելի լայն ընդգրկումն է: Ընդունելով, որ հնչաշղթայում կան հատույթներ և վերհատույթային միավորներ՝ շեշտ, տեմպ, տեմբր, դադար, ռիթմ, մեղեդի, մենք պայմանականորեն սրանք բաժանում ենք երկու կարգի միավորների՝ առոգանույթների,ուր քննարկվող երևույթները շարույթի ոչ ավարտուն միավորների՝ վանկի կամ բառի սահմաններում են, մինչդեռ ինտոնեման այդ հաղորդակցական ավարտուն միավորի՝ նախադասության հնչերանգային կորն է: Փաստորեն առաջին դեպքում մենք գործ ունեինք ոչ իմաստակիր միավորների հետ, մյուս դեպքում հնչերանգը դիտում ենք որպես իմաստային հաղորդակցական հակադրության եզր: Բառ-նախադասության դեպքում այս երկու մոտեցումները միավորվում են, այլ դեպքերում հնչերանգի ուսումնասիրությունը հարմար է սկսել շարույթներից՝ որպես արտաբերության և իմաստի ոչ կայուն, սակայն իրադրական միավորներից: Որպես շարույթի ընդգծման միավոր հնչաշղթայում դիտարկվում է դադարը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթաբաժինը լիովին վերաբերում է դադարի քննությանը:

Դադարը սովորաբար հնչաշղթայում իմաստակիր միավորների միջև առկա հնչման ընդհատումն է, որը առաջանում է արտաբերական օրգանների աշխատանքի դադարեցման դեպքում, երբ այլևս չկա հնչումը կամ հաղորդակցությանը մասնակցող անձանց լսողությունը չի արձագանքում ու իմաստավորում հնչման տարրերը: Լեզվաբանորեն դադարը որոշակի ժամանակահատված պարունակող հնչման ընդհատումն է, թեև առանձին դեպքերում տոնայնության կտրուկ փոփոխությունները նույնպես առաջացնում են լեզվական դադարի տպավորություն: Արտաբերական օրգանների մեկ վիճակից մյուսին անցնելու դեպքում, ասենք, հպական բաղաձայնների արտաբերության ժամանակ անհրաժեշտորեն առաջանում է հնչման /այսպես կոչված ֆոնացիայի/ ընդհատում, սակայն դա այնքան կարճ ժամանակահատված ունի, որ լեզվաբանորեն լեզվակիրների համար նոր իմաստի գոյաձևման պատճառ չէ ու որպես դադար չի ընկալվում: Դադարը, այսպիսով հնչաշղթայի հատույթավորման միավոր է՝ նրա իմաստային բաժանման արդյունք: Դադարները հնչաշղթայում պատահական կտրվածքներ չեն. այլ լեզվակիրները դրանք օգտագործում են որոշակի տեղերում, որոշակի տևողությամբ: Այս առումով կցկտուր և երբեմն նույնիսկ անհասկանալի է դառնում այն խոսքը, որ գրավոր տեքստի հիման վրա փորձում են վերարտադրել օտար լեզուն բավականաչափ լավ չտիրապետող մարդիկ: Տեքստի քննության մեր փորձերը ցույց են տալիս, որ նախադասության հատույթավորման միավորները համընկնում են լեզվաբանորեն շարույթային միավորների հետ: Փաստորեն, գրավոր խոսքի բանավոր վերարտադրության՝ հնչաշղթայի բնական, իրադրական հատույթավորման նվազագույն միավորը շարույթն է:

Հնչաշղթայում դադարները բաշխվում են երեք տեսակի՝ կարճ, միջին, երկար:

Կոպիտ բաժանմամբ կարճերի մեջ մտնում են այն շարույթների սահմանային ընդհատումները, որոնք եզրային չեն, այսինքն՝բացառվում են նախադասության սկիզբն ու վերջը: Միջին դադարներ կարելի է տեսնել բարդ նախադասություն կազմող առանձին նախադասությունների սահմանային ընդհատումներում, իսկ երկար դադարներին բաժին են ընկնում նախադասությունների ավարտական, և ավելի հաճախ, պարբերույթների սահմանային ընդգրկումները: Այս բաժանումը, բնականաբար, ունի շեղումներ: Երբեմն նախադասության տրոհվող անդամների միջև գործառվող դադարները իրենց տևողությամբ գերազանցում են կարճ դադարներին: Կան լեզվաբաններ, որոնք հնչաշղթայի հատույթավորման միավոր են համարում հատվածը. ըստ այդմ՝ դադարները բաժանում ներնախադասականի և միջնախադասականի: Այս դասակարգմամբ առաջին տեսակի մեջ մտնում են նախադասության ներսում գործառվող, իսկ երկրորդի մեջ՝ բարդ նախադասություն կազմող պարզ նախադասությունների և պարբերությունների միջև գործառվող դադարները:

Դադարները խոսքային շղթայում ոչ միայն անջատում են միմյանցից որոշակի իմաստային հատվածներ, այլև միավորում են դրանք: Արձակում և չափածոյում դադարների գործառույթները միանման չեն:Չափածո խոսքում դադարը հանդես է գալիս որպես որոշակի ռիթմական միավոր կազմելու և ամբողջացնելու հնչյունական միջոց **Շատ հաճախ բնական, կենդանի խոսքում անհատական ինչ-ինչ պատճառներով մտքի ամբողջականությունը լրացնելիս որոշակի դժվարությունների հանդիպելիս խոսողը օգտագործում է տվյալ արտահայտության բովանդակության հետ չառնչվող հնչյունական տարրեր ու կապակցություններ:**

Սրանք խոսքում անջատվում են որոշակի դադարներով, սակայն շարույթներ չեն կազմում, քանի որ որոշակի տեղեկատվություն չեն պարունակում: Սրանք մենք չենք նույնացնում մակաբույծ բառերի ու արտահայտությունների հետ, որոնք ինչ-որ ձևով կապվում են հաղորդման բովանդակության հետ, ոճավորում անհատական խոսքը, երբեմն ունենում խոսքի ճարտասանական հատկանիշներ: Լեզվական մոլախոտերը խոսքի չտարորոշված հնչյուններ են, ձայնական միացություններ, որոնք երբեմն նույնիսկ մտնում են շարույթների կազմի մեջ:

Բանավոր խոսքում անհրաժեշտ է տարբերակել նաև շնչառական դադարները, որոնք հաղորդմանը որևէ լրացական արժեք չեն տալիս: Մարդը խոսելու ժամանակ անհրաժեշտորեն է դիմում շնչառական դադարներին, սակայն հաճախ այն մնում է աննկատելի ինչպես խոսողի, այնպես էլ լսողի համար, քանի որ ենթագիտակցորեն շնչառական և խոսքային դադարները միավորվում են կամ մարդ հարմարեցնում է դրանք իրար: Սա, իհարկե, չի վերաբերում շնչառական որոշ կարգի արտահայտություններին, որոնք վերաիմաստավորվում են խոսքում, հանդես գալիս որպես հարալեզվական միջոցներ, նպաստում իմաստի բացահայտմանը, խոսողի վերաբերմունքի ճշգրտմանը:

Ասենք, հաղորդման ժամանակ մարդը խոր հոգոց է հանում. սա անմիջապես լրացական բովանդակություն է տալիս արտահայտությանը:

Արտասանվածքի փորձառական ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հնչման առանձին հատվածների ամբողջությունը լիովին պայմանավորված է խոսողի նպատակադրումներով, և նյութի վերլուծությունը կատարելիս անհրաժեշտ է միմյանցից զատել լեզվականը զուտ ֆիզիկականից:

Գրական հայերենի դադարների դրսևորումները մենք դասակարգում ենք երեք տեսակների՝ շարույթային (կարճ), ներնախադասական (միջին) և միջնախադասական (երկար): Դադարները, ըստ հնչման առկայության և բացակայության, կարելի է բաժանել երկու խմբի՝ լսողական (ձայնական) և համր: Ընդ որում լսողական դադարները սովորաբար դիտարկվում են կարճ դադարների մեջ, մասամբ նաև ներնախադասականներում և ոչ միջնախադասականներում:

Հայերենի արձակ խոսքի փորձառական ուսումնասիրությունը կատարվել է չորս հաղորդավարների ձայնագրած խոսքի հիման վրա: Ձայնագրությունը կատարվել է

ստուդիական պայմաններում՝ սրանից բխող դրական և բացասական կողմերով: Ձայնագրվել են առանձին նախադասություններ, այնպես որ ներկայացվում են դադարների կարճ և միջին տեսակները, քանի որ երկարները կարելի է ուսումնասիրել միայն լայնածավալ ընտրանք պարունակող տեքստի միջոցով :

Փորձառական նյութի բաժանումը շարույթների կատարվել է ըստ լսողական վերլուծության, որոնք լրացվել են երանգագրի պատկերներով: Ահա երեք հաղորդավարների արտասանությամբ գրանցված՝ *Ու այդ պահին// ասես մի ամուր հարվածից // ուժգնորեն բացվեցին պատուհանները //, և շառաչյունով ներս խուժեց // գարնանային հզոր քամին* նախադասության վերլուծության արդյունքները:

Շարույթների սահմանները տրվում են երկու շեղ գծերով՝//:

Նախադասությունը բաժանվում է հինգ շարույթների: Առաջին և երկրորդ շարույթների սահմանում դադարի դրսևորումները հաղորդավարների մոտ միանման չեն: Առաջին հաղորդավարի խոսքում մաքուր դադարը, եթե բացառենք եզրային հնչյունների իրացման տևողության զգալի աճը, 40 հզ/վրկ է, երկրորդի արտասանությամբ այն 230 հզ/վրկ է, մինչդեռ երրորդ հաղորդավարի խոսքում որպես դադար ծառայել է տոնայնության կորագծի կտրուկ իջեցումը:

Նշենք, որ ռիթմական կառուցվածքների ավարտական դիրքերում ձայնավորների և բաղաձայնների երկարության էական ավելացումը ծառայում է որպես խոսքի շղթայի շարույթային հատույթավորման լրացական հատկանիշ: Շատ հաճախ այս դիրքում հնչյունների ժամանակային և որակական հատկանիշների փոփոխությունը պայմանավորում է հնչող դադարի գործառությունը:

Թերևս կարելի է խոսել ոչ միայն եզրային հնչյունների, այլև եզրային վանկերի արտաբերական փոփոխությունների մասին/ սրանք ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ դիտարկվում են որպես կցույթներ հասկացություն/ , թեև բոլոր դեպքերում վանկակազմիչ հնչյունները պահպանում են իրենց տարբերակիչ հատկանիշները: Առաջին և երկրորդ շարույթների միջև գործառվող *ասես* բառը՝ որպես վերաբերական, ունի բաժանարար հատկություն: Վերաբերականները խոսքի շղթայում հաղորդողի անհատական գնահատողական դերի շնորհիվ հաճախ ստանում են առանձին հնչական ձևավորում:

Երկրորդ և երրորդ շարույթների միջև գործառվող դադարը, ըստ հաղորդավարների, ունի հետևյալ արժեքները՝ 1-ին հաղորդավար՝ 260 հզ/վրկ, 2-րդ՝ 60 հզ/վրկ և 3-րդ՝ 580 հզ/վրկ: Դադարների տևողության արժեքների նկատելի տարբերությունները պայմանավորված են մի կողմից շարույթային շեշտի, մյուս կողմից տրամաբանական շեշտի դրսևորումներով: Դադարների տևողության արժեքների նկատելի տարբերությունները պայմանավորված են մի կողմից շարույթային շեշտի, մյուս կողմից՝ տրամաբանական շեշտի դրսևորումներով:

Վերլուծվող բարդ համադասական նախադասությունը կազմված է երկու հնչադասություններից (ֆրազներից), որոնց սահմանը անցնում է երրորդ և չորրորդ

շարույթների միջով: Այստեղ գրանցված են միջին տևողության դադարներ՝ ըստ հաղորդավարների համապատասխանաբար՝ 270, 310 և 480 հզ/վրկ-եր: Դադարների տևողությունը ավելի մեծ կլիներ, եթե այստեղ հանդես չգար և համադասական շաղկապը:

Չորրորդ և հինգերորդ շարույթների սահմանը անցնում է ներս խուժեց և գարնանային բառերի միջով: Սրանց միջև նկատվող հնչման դադարի տևողությունը մեծ չէ՝ 60 հզ/վրկ, սակայն դադարի տպավորության ստեղծման համար որոշակի արժեքավորում ունեն գարնանային բառի ընդգծման հնչական հատկանիշները:

Արձակ և չափածո խոսքի համեմատությունը ցույց է տալիս, որ արձակ խոսքը համեմատաբար ավելի արագ է, քան չափածոն: Բանաստեղծական խոսքի հնչման երկար տևողությունը պայմանավորված է դադարների թվի մեծացմամբ և նրանց տևողության երկարացմամբ: Իր հերթին դադարի տևողության մեծությունը պայմանավորված է շարույթի կամ ռիթմական միավորի ինքնուրույնությամբ, նրա առանձին ըմբռնման արժեքայնությամբ: Դադարների տևողության չափերը տողի միջում և տողերի սահմաններում նույնպես տարբեր են: Եթե ուշադրություն դարձնենք այն շարույթների սահմանային բաժանումներին, որոնք համընկնում են տողերի միջև առկա դադարներին, ապա վերջիններս գրեթե երկու անգամ ավելի երկար են տողամիջի դադարներից: Բանաստեղծական ֆրազի (հնչադասության) մասնատումը տարբեր շարույթների ավելի մեծաքանակ է, քան նույն բովանդակության արտահայտության դրսևորումը արձակ խոսքում: Սա բացատրվում է տաղաչափության շարահյուսության առանձնահատկություններով. յուրաքանչյուր ռիթմական միավորի առավել արժեքայնությամբ, նման միավորի հարաբերական ինքնուրույնության ընդգծմամբ:

Հնչաշղթայում դադարներով պայմանավորված շարույթների տարանջատումը երկիմաստություններից խուսափելու միջոց է, ինչպես լայնորեն հայտնի հետևյալ արտահայտության մեջ՝*ներել// պետք չէ կախել* և *ներել պետք չէ// կախել* կամ նմանատիպ կառույցներում՝ *Արամը կարծում էր //մայրը չի վերադառնա* և *Արամը//կարծում էր մայրը// չի վերադառնա:*

Սովորաբար արձակ խոսքում շարույթները միմյանցից բաժանվում են միասնական հնչերանգային ուրվագծով: Պատմողական բնույթի նախադասությունների շարույթներում հիմնականում պահպանվում է տոնի միագիծ շարժումը, եթե նրանում մուտք չեն գործում տրամաբանական և զգացական շեշտ կրող բառեր: Սա առավել բնորոշ է զանգվածային լրատվության բնագավառում գործառվող հաղորդավարական խոսքին, ուր նախապատվությունը սովորաբար տրվում է չեզոք, անկողմնակալ տեղեկատվության հաղորդմանը: Նման դեպքերում ստացվում են միջշարույթային դադարների որոշակիորեն հավասար տևողություններ:

Չնայած դադարների տևողության հարաբերական բնույթին՝ խոսքում դադարների հատույթավորման մեջ կարելի է առանձնացնել կարճ՝ մինչև 100 հզ/վրկ, միջին՝ մինչև 500հզ/վրկ և բարձր՝ 500հզ/վրկ-ից մեծ հնչման ընդհատումներ, թեև կախված խոսքային

իրադրությունից, նպատակադրումից՝ դադարների իրացման զգալի տատանումներ կարող են ի հայտ գալ: Այսպես՝ թատերական արվեստում՝ բեմում, խոսքի կտրտվածությունը՝ դադարների տևողության չափը, կարող է անհամեմատ մեծանալ, մինդեռ ռադիոյի և հեռուստատեսության հաղորդավարների խոսքը ընդհանուր առմամբ թերևս ավելի մեծ արագություն ունի, աչքի է ընկնում միատարրությամբ, շարույթների համեմատաբար կայուն, հավասարաչափ բաշխվածությամբ:

Ընդունված է լեզվում տարբերակել արտասանական տարբեր ոճեր, մասնավորապես լրիվ և խոսակցական՝ կապված խոսքի արագության հետ: Եթե խոսակցական ոճին հատուկ է արտասանական արագացման միտումը, ապա լրիվ ոճը հատկանշվում է խոսքի դանդաղեցմամբ: Դադարների կտրուկ նվազեցումը բնութագրվում է որպես խոսակցական ոճի կարևորագույն հատկանիշ:

Լեզվական դադարները, լինելով խոսքային գործունեության օբյեկտիվ հատկանիշներ և բաժանվելով ըստ տեսակների իրենց տևողության և գործառության տեսանկյունից, միաժամանակ ունեն իրենց անհատական դրսևորումները: Այսինքն՝ նրանք կարող են մտնել մարդու անհատական հնչյունական առանձնահատկությունները բնորոշող հատկանիշների մեջ: Յուրաքանչյուր անհատ կարող է օգտագործել իրեն հատուկ հնչյունական դադարներ: Սա չի նշանակում, թե անհատը վերանում է լեզվում առկա բնականոն հատկանիշներից և ասենք կարճ դադարների փոխարեն մշտապես կիրառում է երկարները, այլ այն, որ մի անհատի կարճ դադարները կարող են ընդգրկել մինչև 150 հզ/վրկ տևողություն, մինչդեռ մի ուրիշինը գործածվող դադարների մեծամասնության մեջ չի գերազանցում 80 հզ/վրկ տևողությունը: Նման տարբերություններ հնարավոր են նաև միջին և երկար դադարների դեպքում:

Եթե դադարը հիմնականում կապվում է հնչաշղթայում արտաբերության ընդհատումների հետ, ապա խոսքի տեմպը/արագությունը/ հնչվող հատույթների տևողության գնահատումն է:

Հնչերանգի բաղկացուցիչ մասերից մեկն է տեմպը՝ խոսքի արագությունը: :Դրան են նվիրված երկրորդ գլխի երրորդ և չորրորդ ենթագլուխները: Խոսքը իրացվում է որոշակի ժամանակահատվածում: Ժամանակի մեկ միավորի ընթացքում արտաբերվում են տարբեր քանակի հնչյուններ, բառեր, բառակապակցություններ, նախադասություններ: Արագ տեմպի ժամանակ, բնականաբար, խոսքային միավորների քանակը համեմատաբար ավելի շատ է դանդաղի համեմատությամբ: Սակայն բոլոր դեպքում հաշվարկները կատարելիս պետք է նկատի ունենալ տվյալ լեզվի միջին տեմպը, որի համեմատ կատարվել են այդ դիտարկումները:

Խոսքի արագությունը հակադարձ համեմատական է նրա ընկալմանը: Որքան ավելի մեծ է այդ արագությունը, այնքան ավելի դժվար է նրա ընկալումը, իհարկե, մնացած պայմանների նույնության դեպքում: Ասենք, եթե որևէ անհատ ունի լեզվական-բնախոսական ակնհայտ արատ, ապա նրա խոսքը կարող է չընկալվել նույնիսկ դանդաղ տեմպի դեպքում: Խոսքային տեմպի փոփոխությունը այդ հնչաշղթայի հատույթների

համեմատական արագացումը կամ դանդաղեցումն է: Այն պայմանավորված է խոսքի արտասանական ոճով, խոսողի հոգեվիճակով, խոսքի հուզաարտահայտչական բովանդակությամբ: Առօրյա սովորական խոսքը սովորաբար ավելի արագ է հանդիսավոր, պաշտոնական խոսքից: Տեմպը սերտորեն կապված է խոսքի ռիթմի հետ, որտեղ նկատելի են հատվածների տևողական ընդհանրություններ, շեշտված միավորների պարբերական կրկնություններ:

Խոսքի արագությունը ազգային լեզվի բնորոշ առանձնահատկություններից մեկն է: Այսինքն՝ լեզուները տարբերվում են նաև տեմպով: Այնպես որ առանձին լեզուների համար պետք է գտնել խոսքի արագության միջին ցուցանիշներ: Տեմպը միաժամանակ անհատական է: Ամեն մի անհատ ունի իր խոսքի միջին արագությունը: Հայտնի է, որ օտար լեզվով հաղորդակցումը սովորաբար ավելի դանդաղ է մայրենի լեզվի համեմատությամբ: Այստեղ դանդաղեցումը պայմանավորված է մտածողության մեխանիզմի ոչ սովորական գործառությամբ, իներցիայի կանխամտածված և ոչ կամային արգելակմամբ: Մտածողությունը ետ է մնում խոսքային գործունեության միջին տեմպից: Մինչդեռ մայրենի լեզվով հաղորդակցման ժամանակ շատ դեպքերում խոսքային ապարատը չի հասցնում հետևել մտքի թռիչքին: Պարզ է, որ մայրենի լեզու ասելով նկատի ունենք այն լեզուն, որը առավել մեծ հմտությամբ է տիրապետում հաղորդակցվողը: Նույնիսկ երկլեզվակիրների և բազմալեզվակիրների խոսքում լեզուների գործառության լիակատար նույնություն չկա:

Խոսքային գործունեությունը ուղղակիորեն պայմանավորված է հաղորդման իմաստով: Այս առումով իմաստը շատ հաճախ ինքն է թելադրում խոսքային այս կամ այն հատվածի արագությունը: Ինչպես ասացինք, խոսքային հատվածները կարող են լինել տարբեր մեծության՝ սկսած վանկից, վերջացրած նախադասությամբ, ընդ որում շեշտակիր հատվածների տևողությունը ունի նկատելիորեն ավելի երկար դրսևորումներ անշեշտների համեմատությամբ:

Գեղարվեստական գրականության ընթերցման ժամանակ սովորաբար չափածոն արձակի համեմատությամբ ունի ավելի դանդաղ տեմպ:

Խոսքային շղթայի մեջ նախադասությունների տարբեր տիպերի իրացման ժամանակ նկատելի են սրանց համար բնորոշ միջին տեմպային ցուցանիշների տարբերություններ: Խոսքի արագությունը պայմանավորված է ինչպես նախադասության բնույթով, այնպես էլ այդ նախադասությունների կառուցվածքով. միանդամ, միակազմ նախադասությունները համեմատաբար ավելի երկար տևողություն ունեն բարդ նախադասությունների համեմատությամբ:

Առանձին վերցրած բառերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բառերը ըստ իրենց կազմում հանդես եկող վանկերի քանակի ու տեսակի, ունեն իրացման ծամանակահատվածի տարբերություններ: Սովորաբար որքան ավելի շատ են մեկ բառում հանդես եկող վանկերի քանակով կազմությունները, այնքան ավելի արագ են ձևավորվում նման հնչաբառերը:

Եթե միավանկ բառերի տևողությունը տատանվում է 500-570 հզ/վրկ- ում, ապա երկվանկ բառերի տևողության միջին արժեքները, ըստ մեր հաշվարկների, 640 հզ/վրկ է:

Ընդ որում, վանկերը տևողությամբ միմյանցից նկատելի տարբերություններ չունեն և միայն երկրորդ վանկում ձայնավորին բնորոշ հատվածում հզորության բաղադրիչի գերազանցությունն է ընդգծում այդ վանկի շեշտակրությունը: Եռավանկ բառերի միջին տևողությունը մոտ 200 հզ/վրկ-ով ավելի է երկվանկի համեմատությամբ: Նրա միջին ցուցանիշը 835 հզ/վրկ է: Քառավանկ և հնգավանկ բառերում ամեն մի նոր վանկի ավելացումը մեծացնում է բառի ընդհանուր տևողությունը մոտ 120 հզ/վրկ-ով: Եթե հնգավանկ բառում տևողության միջին արժեքը 1075 հզ/վրկ է, ապա վեցավանկ բառում տևողության ավելացումը ավելի պակաս է 60 հզ/վրկ և բառի միջին տևողությունը գտնվում է 1135 հզ/վրկ-ի սահմաններում: Յոթավանկ բառում տևողության համեմատաբար զգալի ավելացումը՝ 180 հզ/վրկ մենք հակված ենք բացատրել երկրորդական շեշտի գործառությամբ: Յոթավանկ բառերի միջին տևողությունը կազմում է 1315 հզ/վրկ: Ութավանկ և իններավանկ բառերում պահպանվում է մինչ այդ նկատված օրինաչափությունը. ամեն մի անշեշտ վանկ բառի տևողությունը մեծացնում է մոտ100 հզ/վրկ-ով: Այսինքն՝ ութավանկ բառի միջին տևողությունը 1435 է, իններվանկինը՝ 1530 հզ/վրկ:

Ինչպես արդեն նշվեց, բառի մեծացման ժամանակ սովորաբար փոքրանում է նրա մեջ մտնող վանկերի տևողությունը: Ընդհանրապես լեզվի օրինաչափություն է համարվում այն, որ լեզվական ցանկացած միավորի քանակի ավելացման դեպքում միտում է նկատվում նրանց տևողության կրճատման: Խոսքը, թերևս, ոչ այնքան տևողության կրճատման, որքան նույնական միավորների տևողությամբ հավասարեցման, ռիթմական կազմակերպվածության մասին է: Այսպիսով, ինչքան ավելի տևական է տվյալ լեզվական միավորը, այնքան ավելի հնչողությամբ կարճ են նրա մեջ մտնող միավորները:

Հնչյունական շղթայի արագությունը պայմանավորված է մի քանի գործոններով: Պատմողական նախադասությունը, որը առավել լայն ընդգրկում ունի, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում, հաղորդակցական մյուս տիպի նախադասությունների՝ հարցականի, բացականչականի և հրամայականի համեմատությամբ ցուցաբերում է միայն իրեն բնորոշ առանձնահատկություններ: Այն սովորաբար կարելի է դիտարկել որպես խոսքի միջին արագության չափանիշ, ելակետ, որին կարելի է համադրել հաղորդակցական մյուս տիպերին պատկանող նախադասությունները: Իհարկե, խոսքի արագությունը հակադարձ համեմատական է նրա ընկալմանը, սակայն բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ այն ունի նաև բնախոսական սահմաններ: Համեմատաբար հեշտ է արագացնել մայրենի լեզվով արտաբերվող խոսքը՝ օտար լեզվի համեմատությամբ, թեև այստեղ ևս այն սահմանափակվում է արտաբերական օրգանների գործառական հնարավորություններով: Խոսքի արագության համար կարելի է տարբերակել նաև լսողական և իրական չափանիշներ: Մի դեպքում նկատի ունենք այն

տպավորությունը (ընկալման ռեակցիան), որ առաջանում է լսողի մոտ խոսքային ավարտուն, ձևավորված հատվածի ունկնդրման ժամանակ, մյուս դեպքում այն իրական ժամանակահատվածը, որը կարող են գրանցել ձայնագրող սարքերը հնչաշղթայի իմաստակիր (հնչվող) հատվածների գործառության ժամանակ:

Հայտնի է, որ լսողությամբ տարբերում են խոսքի արագության մակարդակը, ըստ այդմ էլ՝ արագախոս կամ դանդաղախոս մարդկանց: Նկատելի է, որ վարքագծով եռանդուն մարդկանց հատուկ է խոսքի և շարժումների (հարալեզվական միջոցների օգտագործման) նկատելի արագություն: (Այստեղ ևս պետք է նկատի ունենալ, որ խոսքային գործունեության տարբերություններ նկատելի են ազգային տարբեր խառնվածք ունեցող ժողովուրդների մոտ): Խոսքի արտաբերության առավել սովորական եղանակը նման պայմաններում դանդաղեցման տպավորության ստեղծումն է՝ ի հաշիվ միջբառային, միջշարույթային դադարների տևողության մեծացման, մինչդեռ բուն հնչական միավորների արտաբերությունը, հնչակազմավորումը կարող է գերազանցել դանդաղախոս մարդու արտաբերական հնարավորությունները: Բոլոր դեպքերում մարդու մոտ խոսքի արագացումը և դանդաղեցումը կատարվում է որոշակի նպատակադրմամբ, արտասանական նկատելի ճիգերի հետևանքով: Խոսքային արագության փոփոխությունը պայմանավորված է ինչպես նրա կողմից առանձին հնչույթները ընդգծելու նպատակադրմամբ, այնպես էլ խոսքի միապաղաղությունը վերացնելու նպատակով: Իրական բանավոր խոսքի և նրա գրավոր համարժեքի հնչարտաբերական իրացումները ունեն զգալի տարբերություններ: Եթե բանավոր խոսքը միանգամից կատարվող երևույթ է, ապա գրավորի հնչեցումը լրացուցիչ գիտակցական վերաիմաստավորման, մշակման հնարավորություններ է պարունակում: Չի կարելի ենթադրել, թե գրավոր խոսքը պարզապես բանավորի տարբերակն է, սրա արտահայտության յուրօրինակ ձևը: Երկու դեպքում էլ գործում են միայն սրանց հատուկ օրինաչափություններ, որոնք, ինչ-ինչ տեղ միավորվելով, ինչ-ինչ դեպքերում էլ կարող են ունենալ միայն իրենց բնորոշ առանձնահատկություններ: Խոսքի արագության ուսումնասիրության ժամանակ հաշվի են առնվել հաղորդավարների կողմից գրավոր տեքստի հնչեցման առանձնահատկությունները, որոնք իրական խոսքի համեմատությամբ ունեն որոշ չափով արհեստականության, հաղորդավարին պարտադրված, նրա մտածական ինքնուրույնության արգելակման որոշակի կնիք կրող իրողություններ: Այս վերապահությամբ հանդերձ՝ այն դիտարկվել է որպես բանավոր խոսքի ուսումնասիրության նյութ:

Ատենախոսության մեջ ներկայացվում են մեկ տասնյակից ավելի պատմողական նախադասությունների փորձառական ուսումնասիրության արդյունքները

Դիտարկումները ցույց են տալիս, որ պատմողական նախադասությունների արտաբերության ժամանակ կարելի է նկատել որոշ օրինաչափություն. հնչաշղթայի մուտքը և ավարտը ազդարարող շարույթները ունեն համեմատաբար դանդաղ տեմպ՝ միջին հատույթների համեմատությամբ: Բնականաբար, այս օրինաչափությանը

հակառակ՝ արտահայտության պլանում գործում են նաև բազմաթիվ այլ սահմանափակումներ՝ կախված խոսքում իմաստային, կամային, ենթատեքստային, իրադրական բնութագրումների համար գործածվող լեզվական միջոցների փոխգործառությունից: Սակայն պետք է կարծել, որ պատմողական բնույթի նախադասության հնչաշղթան այն ելակետն է, ուր համեմատաբար պակաս են գործառվում լեզվական և արտալեզվական միջոցներ՝ խոսքին հատկապես արագություն հաղորդելու նպատակադրմամբ: Միաժամանակ պետք է նշել , որ նման պայմաններում, երբ հաղորդավարը պարզապես կարդում է իրեն առաջարկած տեքստը, այն ունի որոշակի արհեստականություն, քանի որ տեքստը չի ստեղծվում կենդանի հաղորդակցման մեջ, չի արտածվում մարդու կողմից, այլ սոսկ ներկայացվում է:

Քննարկված բոլոր 15 նախադասությունների համար կարելի է բերել ընդհանուր եզրակացություններ. 326 վանկ պարունակող և/կամ 790 հնչյունից կազմված տեքստի ընդհանուր տևողությունը 58010 հզ/վրկ է: Եթե բացառենք դադարները, ապա սա արտաբերական օրգանների մշտական գործառությամբ պայմանավորված տեքստ է: Ողջ տեքստի համար ունենք հետևյալ արժեքները՝ հնչյունի միջին երկարությունը 73,43 հզ/վրկ, վանկի միջին տևողությունը 177,94 հզ/վրկ:

Տարբեր հաղորդակցական տիպերի նախադասությունների համադրությունը ցույց է տալիս, որ պատմողական տիպի նախադասությունները ունեն խոսքի արագության համեմատաբար պակաս նկատելի փոփոխություններ մյուս տիպերի համեմատությամբ:

Բոլոր դեպքերում նկատելի է մի ընդհանուր օրինաչափություն. փոքրաթիվ միավորներից կազմված շարույթները ունեն դանդաղ արտաբերություն՝ շատ միավորներից կազմվածների համեմատությամբ և կարծես ձգտում են ենթարկվել այն կանոնին, ըստ որի՝ շարույթները փորձում են դառնալ ժամանակով հավասարապես բաժանելի հատվածներ: Տեմպի դրսևորումը, իհարկե, զգալիորեն պայմանավորված է տվյալ հաղորդման ռիթմով, որը հատկապես նկատելի է չափածո խոսքում: Այստեղ առանձին շարույթների ժամանակային համահարթման, միասնականացման համար օգտագործվում են հնչյունական բազմաթիվ գործոններ: Այսպես, տեմպի փոփոխություններ կարող են առաջացնել ինչպես առանձին հնչյունների /մասնավորապես ը,յ/, այնպես էլ վանկերի կորուստները՝ խոսքի արագ կազմավորման ժամանակ:

Տեմպի փոփոխությունները մեծապես նպաստում են հնչաշղթայի այս կամ այն հատույթի ընդգծման հնարավորությանը: Պատմողական նախադասությունների համեմատությամբ հարցական և բացականչական նախադասությունների հաղորդակցական կենտրոնները տևողության ավելի մեծ ժամանակահատվածում են իրացվում:

Պարզ է, որ, ասենք, հարցական կամ բացականչական հատվածների ընդգծումը միայն այդ բառի կամ նրանից ավելի մեծ կամ փոքր միավորի դանդաղ արտաբերության արդյունքը չէ, այլ այն սերտորեն կապվում է նախադասության ողջ հնչերանգային

կազմակերպվածության հետ, այստեղ՝ հենց ընդգծվող հատվածների մեղեդայնության կորի դրսևորումների հետ: Իհարկե, հաղորդակցական տիպերի դասակարգումը պայմանավորված է արտաբերության տարբեր գործոններով, սակայն սրանցում կարևոր բաժինը հատկացվում է հնչերանգին,ինչպես մեղեդու կորի տեսակին, այնպես էլ նրա արտահայտության տարբեր բաղադրիչների գործառությանը:

Հայերենի խոսքի ընդհանրական արագության բացահայտման համար դեռևս անցյալ դարի 70-ական թվականներին Ա.Խաչատրյանը և ատենախոսության հեղինակը ինժեներ Հարություն.Զաքարյանի համագործակցությամբ . կատարել են փորձառական ուսումնասիրություն. համադրվել են համամիութենական «Ժամանակ» ծրագրով հնչվող տեքստերը հայերենով թարգմանաբար ներկայացվող համարժեք տեքստերի հետ: Գրեթե 30 րոպե տևողությամբ հնչող յուրաքանչյուր երկու տեքստերին ավելացվել են ինչպես հաղորդումներին մասնակցող և քիչ պատրաստված անձանց, այնպես էլ հանպատրաստից խոսող, անմիջական, անկաշկանդ հաղորդակցվող անձանց խոսքը:

Հայերենի և ռուսերենի հաղորդավարների արտաբերության մեջ նկատելի տարբերություններ չեն բացահայտվել, քանի որ, ինչպես արդեն ասացինք, նրանք պարտավոր էին որոշակի ժամանակահատվածում ավարտել իրենց տրված տեքստի ընթերցումը:: Ժամանակով պարտադրված գործոնը հատկապես ազդում էր հայերենով ներկայացվող խոսքի արագության մեծացմանը, քանի որ յուրաքանչյուր թարգմանություն սովորաբար մեծացնում է թարգմանված տեքստը, ընդ որում նկատելի է ռուսերենի համեմատությամբ հայերենում բազմավանկ բառերի գերակշռությունը: Փաստորեն հաղորդավարների խոսքը այս պայմաններում հայերենի համար ընդգծված արագ էր ստացվում, քանի որ պայմանավորված էր ժամանակին վերարտադրելու պարտադրականությամբ::

Նկատելի տարբերություններ են բացահայտվում քիչ պատրաստված և անծանոթ տեքստը ընթերցող անձանց խոսքերի համեմատությունից: Հայերեն խոսքում այս պայմաններում նույն ժամանակահատվածում գործառվում են ռուսերենի համեմատությամբ ավելի պակաս հնչյունական միավորներ: Երկու լեզուների խոսքի արագության մասին ամփոփ պատկերացում է տալիս ներկայացվող աղյուսակը.

Չափման միավորներ

Խոսքի տեսակներ	Հնչյուն 1 վայրկյան		Վանկ 1 վայրկ.		Բառ 1 վայրկ.		Հնչաբառ 1 վայրկ.	
	հայ	ռուս	հայ	ռուս	հայ	ռուս	հայ	ռուս
Հաղորդավարի խոսք	13.65	13.32	5,75	5.51	1.89	2	1.77	1.71

Քիչ պատրաստված անձ	10	12.87	4.16	5.41	1.59	2.05	1.47	1.75
Անպատրաստ խոսք	9.26	11.5	3.79	4.87	1.67	2.02	1.54	1.61
Խոսքի միջին արագութ.	10.95	12.56	4.52	5.26	1.72	2.02	1.59	1.69

Ինչպես տեսնում ենք, աղյուսակը վկայում է, որ վայրկյանում հայերենի մոտ 10 հնչյունի արտաբերությանը ռուսերենով հնչված խոսքում համապատասխանում են 12-13 հնչյուններ:

Միայն հաղորդավարների խոսքի համեմատությունները ցույց են տալիս, որ հայ հաղորդավարները ժամանակի միավորի ընթացքում ավելի շատ հնչյուններ են արտաբերում ռուս հաղորդավարների համեմատությամբ, որը, ինչպես արդեն նշվել է, պայմանավորված է ամբողջական տեքստը առաջադրված ժամանակահատվածում ունկնդիրներին մատուցելու պարտադրականությամբ:: Մնացած բոլոր դեպքերում ռուսերեն հնչած խոսքը անհամեմատ արագ է հայերենից՝ վերլուծված գրեթե բոլոր տեքստերում:

Լայն առումով հնչերանգի բաղկացուցիչ տարրերից է ռիթմական հասկացությունը, որի քննությունը կատարվում է երկրորդ գլխի հինգերորդ և վեցերորդ ենթագլուխներում: Ռիթմը սերտորեն կապվում է տարածության ու ժամանակի մեջ պարբերաբար կրկնվող երևույթների հետ: Այս առումով ռիթմ են տեսնում ինչպես խոսքում և երաժշտության մեջ, այնպես էլ ճարտարապետության ու գեղարվեստի, գիտության ու հասարակության գործունեության ամենատարբեր բնագավառներում: Ռիթմական միավորների յուրահատկությունն այն է, որ սրանք չափելի, հաշվարկելի միավորներ են: Եթե գոյություն ունի ռիթմի զգացողություն և այն կարելի է հաշվարկել, ապա կա նաև ռիթմից զուրկ, անկանոն, քաոսային վիճակ, որոշակի համակարգայնությունից դուրս չտարորոշվող երևույթ, այսպես կոչված ոչ-ռիթմականություն: Քանի որ ռիթմը հանդիպում է մեզ շրջապատող իրականության մեջ, մեր ամենօրյա կյանքում ու գործունեության մեջ, ապա ընդունված է տարբերակել նրա մի քանի տեսակներ: Հիմնականում սրանք հանգում են հետևյալ տեսակներին՝ մեխանիկական, կենսաբանական, սոցիալական, գեղարվեստական և խոսքային:

Ռիթմական հիմնական հատկանիշը այդ համանման երևույթների պարբերականությունն է: Ռիթմի բոլոր տեսակներում չէ, որ պարբերականության հատվածները ճշգրտորեն համընկնում են: Սրանք ունեն որոշ փոփոխություններ, սակայն որոշակի սահմաններում, և չեն գիտակցվում որպես ռիթմի խախտումներ: Այլապես պետք է խոսել ոչ-ռիթմականության, անհամաչափության մասին Եթե մեքենայական կամ կենսաբանական ռիթմերում այս կամ այն չափով կրկնվում են նույնական կամ համանման հաջորդականության հատվածներ, ապա գեղարվեստական ռիթմում սրանք կարող են լինել բոլորովին այլ բովանդակություն ունեցող հատվածների կրկնություններ, որոնք մշտապես լրացվում են կամ նորացվում իրենց շեշտայնությամբ ու հնչերանգով:

Թեև մարդիկ ունեն ռիթմական և տեմպային որոշակի չափանիշներ, սակայն լեզուները այս հատկանիշով լիովին չեն նույնանում: Լեզուներում այն ոչ այնքան կենսաբանական գործոնի, որքան լեզվական կառուցվածքի առանձնահատկություն է: Ինչ-ինչ դեպքերում կարելի է խոսել նաև տվյալ լեզուն կրող ժողովրդի հոգեկան կերտվածքի ազդեցության մասին: Մարդիկ ունեն ռիթմական ընկալման յուրահատկություններ: Շատ հաճախ երաժշտության ընկալումը ուղեկցվում է զանազան կարգի շարժումներով: Սա մադու կողմից ռիթմին հարմարվելու ունակությունն է:

Խոսքի ռիթմի ուսումնասիրությունը կատարվում է երկու պլանով՝ մեկը չափածոյի ռիթմն է, մյուսը՝ արձակի: Երկու դեպքում էլ ռիթմը շղթայի որոշակի ժամանակահատվածներում պարբերաբար կրկնվող երևույթն է: : Սրանց մեջ առանձնացվում են ինչպես հատույթային, այնպես էլ վերհատույթային երևույթներ: Հատույթայինը առանձին հնչյունների կամ հնչյունախմբերի կրկնություններն են: Սրանք գրականագիտության մեջ հայտնի են նմանաձայնություններ կամ բաղաձայնույթներ անվանումով:

Ռիթմի նվազագույն միավոր ընդունված է համարել վանկը, թեև այն ոչ այնքան ռիթմական, որքան արտաբերության նվազագույն միավոր է: Չափածոյում ռիթմական միավոր են համարում հնչախումբը, շարույթը, տողը, նախադասությունը: Ռիթմական խմբում սովորաբար լինում է մեկ շեշտված վանկ, որին հաջորդում կամ նախորդում են անշեշտ վանկ կամ վանկեր: Ռիթմական խումբը, այսպիսով ,դառնում է չափածոյում հնչաշղթայի բաժանման նվազագույն միավորը: Շատերը չեն ընդունում սրա առանձին միավոր լինելը և չափածո խոսքի համար անբաժանելի, անտարրալուծելի են համարում տողը՝ որոշակի հակադրություն դիտելով ռիթմական մեխանիկական բաժանման և տողերի իմաստային բաժանման միջև:

Արձակում ռիթմական միավորների ընդունման հարցը շատ կողմերով նույնանում է խոսքի հատույթավորման միավորներին: Այս առումով, թերևս, կարելի է վանկը չդիտել ռիթմական կառուցվածքի նվազագույն միավոր և հիմնական ուշադրությունը դարձնել ռիթմական խմբին, որը հայերեն արձակ խոսքում ավելի հաճախ հենց շարույթն է, և ուր հանդես են գալիս շեշտված և անշեշտ վանկերի հարաբերությամբ միավորվող և զանազանվող հնչյունական շարքեր:

Արձակում ռիթմական խմբի առանձնացումը ըստ երևույթին շատ ավելի կապված է անհատի ստեղծագործական յուրահատկության հետ: Եթե հեղինակը հատկապես ճիգ չի գործադրել ռիթմական կազմակերպվածությամբ խոսքը կառուցելու համար, ապա պետք է ենթադրել, որ նրա արձակ խոսքում պիտի լինի ռիթմական մի այնպիսի կազմակերպվածություն, որը ինչ-որ ձևով կապվի անհատի հոգեբանա-բնախոսական յուրահատկության, խառնվածքի հետ: Թերևս ամեն մի հեղինակի մոտ սրանք կարող են լինել յուրով ինչպես ողջ ժառանգության ուսումնասիրության տեսանկյունից, այնպես էլ որևէ խոշոր ստեղծագործության մասերի համադրման առումով, այնպես էլ այլ հեղինակների համեմատությամբ: Սակայն լայն առումով թերևս կարելի է մտածել որևէ

լեզվի ռիթմական կազմակերպվածության մասին, գտնել միջին չափանիշներ: Այստեղ է հավանորեն ազգային յուրահատկությունների բացահայտման, ժողովրդի խառնվածքի ու դրա դրսևորման բնորոշ հատկանիշներից մեկի բացահայտման բանալին:Անհատականը և ընդհանրականը սերտորեն կապված են միմյանց հետ: Մեկի միջոցով մյուսի բացահայտումը նույնպես առաջնահերթ խնդիր է: Համադրման համար անհրաժեշտ է վիճակագրություն, որ հնարավոր լինի մեծածավալ նյութի ընդգրկում և հաշվարկներ ժամանակակից հաշվողական տեխնիկայի օգտագործմամբ, այլապես փոքրածավալ նյութի կառուցվածքային վերլուծությունը չի կարող լիովին հավաստի գաղափար տալ ողջ լեզվին բնորոշ առանձնահատկությունների մասին:

Փորձարկվողը արձակի ռիթմական կազմավորումները կարող է համեմատաբար հեշտորեն վերարտադրել, երբ նրան առաջարկված խոսքը արդեն հնչվել է, մինչդեռ որոշակի դժվարություն է ներկայացնում գրավոր տեքստի վերարտադրությունը,ուր բացահայտվում են անհատի ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական ունակությունները:

Արձակի ռիթմական կառուցվածքի ուսումնասիրությունը կարելի է համարել քիչ թե շատ ընդունելի լայն ծավալի տեքստերի ուսումնասիրության դեպքում, եթե, բնականաբար, սրանց մեջ ընդգրկվեն նաև բազմապիսի ոճական տարբերություններ պարունակող տեքստեր: Առանձին արտասանված և միմյանցից կտրված ու իմաստային կողմը չպահպանող նախադասությունների ընտրությունը չի տա հավաստի արդյունքներ: Գրավոր խոսքում առկա ռիթմական կազմակերպվածությունը այդ հեղինակի նպատակադրվածության բացահայտման յուրահատկություններից մեկն է և նրա խախտումները հաղորդավարների կողմից կարող են պակասել մեծ ծավալի տեքստերի վերարտադրության ժամանակ և մեծածավալ տեքստից դուրս վերցված նախադասությունների արտաբերության ժամանակ:

Ռիթմական խոսքի գնահատման համար թերևս առավել նպատակահարմարը անկաշկանդ խոսքի գրանցումն է՝ հատկապես երկխոսության ժամանակ: Այն նախապատրաստված չէ, ունի ռիթմական տարբեր կառուցվածքներ՝ նայած խոսողության սկզբին, ընթացքին և ավարտին: Թռուցիկ դիտարկման դեպքում նույնիսկ կարելի է նկատել, որ հանպատրաստից խոսակցության ժամանակ գերակշռում են ավելի կարճ շարույթները՝ նախապատրաստված արձակ խոսքի համեմատությամբ: Այն ունի ռիթմական կառուցվածքների բազմազանություն և արագ փոփոխությունների ունակություն:

Մեր կարծիքով, վանկը ինքնին չի կարելի դիտել որպես առանձին ինքնուրույն ռիթմական միավոր, եթե, իհարկե, նկատի չունենանք առանձին վանկ-բառերը կամ վանկ-շարույթները, որոնք ունեն ավելի բարձր մակարդակի միավորներ կազմելու համար անհրաժեշտ բոլոր իմաստային և հնչերանգային համապատասխանությունները: Սովորաբար ռիթմական միավոր պետք է համարել շեշտված և անշեշտ վանկերի որոշակի կարգավորված հաջորդականությունը: Լեզվաբանական գրականության մեջ ավելի շատ

հակված են նման հաջորդականությունը անվանել ռիթմական խումբ: Ռիթմի ընկալման համար պետք է գոյություն ունենան նվազագույն և ծայրագույն հաջորդական ժամանակահատվածների դրսևորումներ: Պարզագույն ռիթմը այդ երևույթի նույնական ընդմիջարկմամբ կրկնությունն է, մինչդեռ բարձրագույնի մեջ կարող են լինել մեկից ավելի երևույթներ՝ սրանց ժամանակային տարբեր հաջորդականություններով

Ռիթմը կարելի է դիտարկել շարույթում՝ անշեշտ ու շեշտված, ինչպես նաև նույն կամ նման կազմություն ունեցող վանկերի ու բառերի հարաբերությամբ, կամ պարբերության մեջ նույն կառուցվածքն ունեցող իմաստակիր միավորների պարբերական կրկնության ժամանակ և այլն:

Սովորաբար լեզուներում ռիթմական կազմակերպվածությունը դիտարկում են երկու կարգի հասկացություններով: Մի դեպքում այն վանկային ռիթմն է, մյուս դեպքում՝շեշտայինը: Հայերենի համար ավելի նպատակահարմար է այն անվանել շեշտական, որը այլ լեզուների համեմատությամբ ունի էական առանձնահատկություն: Այն է՝ հայերենի շեշտը ամրագրված է բառի վերջին վանկի վրա և միայն չնչին բացառություններով՝ այլ վանկերի վրա: Սակայն շեշտական ռիթմ ասելով չպետք է պարզապես հասկանալ բառական շեշտերի պարբերական կրկնություն

Շեշտավոր ռիթմի ժամանակ պետք է նկատի ունենանք, որ մեկ շեշտակիր վանկից մինչև մյուս շեշտակիր վանկը ընկած տարածությունները պետք է ձգտեն հավասարության. ասենք հենց ռիթմի տպավորություն առաջանում է այդ ժամանակահատվածների ընդգծման մեջ: Այս դեպքում պարտադիր չէ, որ շեշտված վանկերի միջև գտնվող անշեշտ վանկերը քանակով միմյանց հավասարվեն: Հնարավոր է, որ այդ տարածության հնչական անցման համար օգտագործվեն տարբեր արագություններ (տեմպի փոփոխություն), հնարավոր են նաև երկրորդական շեշտերի ուժեղացումներ և հիմնական շեշտի թուլացումներ: Այս ամենը, իհարկե, ամբողջացվում է տոնային կորագծով, որն էլ կարող է կարգավորող գործոն լինել: Ռիթմի մասին խոսելիս առաջին հերթին մենք պետք է սովորաբար նկատի ունենանք շարույթը և ոչ թե նրա մեջ մտնող առանձին բառերը:

Իհարկե, հայերենի արձակի ռիթմական կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ մենք նկատի ունենք, որ ռիթմական կառուցվածքի կազմակերպմանը կարող են մասնակցել հնչական տարբեր միջոցներ, որ այն կարող է ընդգրկել ինչպես բառն ու շարույթը, այնպես էլ նրանցից ավելի մեծ միավորներ, միաժամանակ պետք է կարծել, որ լեզվում գործում են ռիթմական մի շարք համակարգեր: Երբեմն ռիթմական կառուցվածքը պահպանելու համար խոսողը ստիպված է լինում բաց թողնել առանձին վանկեր, կրճատել, սղել: Այսպիսին է, ասենք, հևիհև, շնչասպառ ներս մտած մարդու կցկտուր խոսքը, երբ բնախոսական ռիթմը ևս իր կնիքն է դնում խոսքի ռիթմի վրա:

Չափածոյի և արձակի ռիթմական տարբերությունները նշելիս թերևս կարելի է ընդունել, որ այն ամենից ավելի երևում է շարույթային կազմություններում: Չափածոյում շատ ավելի հաճախ ռիթմական միավորը ընդգծվում է բառում, և բառն է դառնում

ռիթմական կառուցվածքի բաղկացուցիչ տարրը, մինչդեռ արձակում բառը մտնում է շարույթ և կատարում այն դերը, ինչ ունեն վանկերը բառական մակարդակում: Այլ խոսքով՝ ոչ թե վանկը, այլ բառն է դառնում շարույթի ռիթմական կառուցվածքի բաղկացուցիչ: Կենդանի խոսքում շատ ավելի տարածված են 2-3 բառանի շարույթները, իսկ նրանցում ընդգրկվող վանկերի քանակը առավել տարածված տեսակներում ներառում է 5-12 վանկ:

Շարույթային շեշտը հնչաշղթայում հենց բաժանարար գործառություն ունի, թեև չի կարելի բացառել նաև, որ շղթայի ձևավորմանը ու առանձնացմանը իր մասնակցությունը կարող է ունենալ և տոնը՝ հնչերանգի կորը: Բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ շարույթները ձևավորվում են իմաստի թելադրանքով, սրանք սոսկ բնախոսական արտասանական և արտաբերական գործունեության արդյունք չեն: Արտահայտության (նախադասության, պարբերության) մեջ միջշարույթային կապը իրականացվում է դադարներով և մեղեդայնությամբ (առանձին դեպքերում խոսվում է նաև հնչվող դադարների մասին): Դասական շարույթային ըմբռնմամբ ամեն մի շարույթ պետք է առանձնանա մեկ շարույթային շեշտով, մինչդեռ վերջին ժամանակներում առանձին ուսումնասիրողներ առաջ են քաշում նաև այն վարկածը, որ շարույթի մեջ կարող են լինել նաև այլ շեշտակիր կենտրոններ: Ասենք շարույթի մեջ մտնող բառերից մեկն ու մեկը առանձնանում է իր բառային շեշտով և բառը չի առանձնանում հնչաշղթայում որպես առանձին շարույթ, այլ պահպանվում է շարույթի ամբողջականությունը՝ սրա հետ նաև ողջ արտահայտության ռիթմական կառուցվածքը: Հնչաշղթայում առանձնացվում է նաև նախադասության շեշտը, որը արտահայտության մեջ առկա շարույթներից վերջինի շեշտն է:

Միշտ չէ, որ նախադասության շեշտը համընկնում է տրամաբանական շեշտի հետ, սակայն բոլոր դեպքում իր որոշակի դերն ունի հնչերանգային կորի ավարտվածության ձևավորման գործում:: Ասենք շատ դեպքերում այն նույնանում է կորի կտրուկ իջեցման հետ (պատմողական բնույթի նախադասություններում), սակայն հնչերանգային կորի բարձրացումը և իջեցումը նույնպես շղթայի որևէ հատվածի առանձնացման միջոց է, և այն չի կարելի չդիտել որպես շեշտի արտահայտություն: Համենայն դեպս միայն այդ հատվածը չէ, որ բնորոշում է նախադասության հաղորդակցական տեսակը, այլ ողջ հնչաշղթայում գործառվող մեղեդայնության կորը

Խոսքի ռիթմական կառուցվածքը ինքն էլ իր ուղղումներն է մտցնում հնչաշղթայի ձևավորման նեջ:Ասենք, որ հենց շարույթների սահմանում չեն առաջանում հնչաբառերը, այլ շարույթների ներսում, քանի որ այս դեպքում հնչումը չի դադարում, և բառերի կցման վայրում կարող են առաջանալ վանկային նոր կազմություններ, որոնք, բնականաբար, հիմնականում չեն ազդում հաղորդման բովանդակության փոխանցման, հետևաբար և ըմբռնման վրա: Արտասանվածքի նման բաժանումը խիստ պայմանական է, որովհետև բառի հնչական պատկերի գիտակցումը կա ինչպես հաղորդողի, այնպես էլ ընդունողի մտքում, բացի այդ՝ շատ կարևոր է իրադրական վիճակը, ինչպես նաև կանխենթադրման գործոնը: Նման

արհեստական կտրատումները զուտ ռիթմական կառուցվածք ստեղծելու համար արձակում համենայն դեպս չեն ընդգծվում: Նույնիսկ արձակում շատ հատկանշական են ռիթմից ընկնելու, ռիթմը խախտելու, հավասարակշռությունը կորցնելու և նորից վերականգնելու հատկանիշները:

Եթե հատույթի ներսում տոնային փոփոխությունը այդ հնչույթի տարբերակային ձևերի առանձնահատկությունն է կամ խոսողի անհատական հատկանիշների արտահայտությունը և սերտ կապ չունի բովանդակության կամ իմաստային կողմի հետ, ապա ատասանվածքի հատույթավորման մեծ միավորների (շարույթ, հնչադասություն և այլն) տոնային փոփոխությունը անմիջականորեն կապվում է արտահայտության բովանդակային կողմի հետ, ունի առավելապես նպատակադրված փոփոխության միտում ու համեմատաբար քիչ է կապվում անհատական խոսքային դրսևորման հետ: Հնչական տոնային այդ փոփոխությունը, հետևաբար, պայմանավորված է հաղորդակցական անհրաժեշտությամբ, ունի կանոնական բնույթ և տվյալ հանրության համար ընդունելի որոշակի կաղապարներ:

Իսկ ինչպե՞ս են դրսևորվում արձակի ռիթմի ֆիզիկական հատկանիշները: Մի բան պարզ է, որ ռիթմական արտահայտությունները ինչպես չափածոյում, այնպես էլ արձակում ունեն ընդհանուր հատկություններ: Սակայն չափածոյի և արձակի ռիթմական դրսևորումների մեջ կան նաև էական տարբերություններ: Եթե չափածոյում սրանք ունեն համեմատաբար կայուն հատկանիշներ, որոնք դրսևորվում են առաջին հերթին շեշտակիր միավորների հավասարաչափ բաշխման մեջ, ապա արձակում չկա նման հատուկ սահմանազատում: Արձակ խոսքի ռիթմական կառուցվածքի մեջ համեմատաբար մեծ տեղ է հատկացվում փոխազդեցական հատկանիշների օգտագործմանը: Արձակում համեմատաբար մեծ տեղ են զբաղեցնում զուգադրական պատկերավորման միջոցները: Նման տպավորություն առաջանում է խոսքի կրկնվող հատվածների շնորհիվ: Եթե չափածոյի ռիթմական կառուցվածքում առաջին պլան է մղվում հնչաբառը և նրա բառային շեշտը, ապա արձակի ռիթմական առանձնահատկությունը հիմնականում պայմանավորված է շարույթային շեշտի դրսևորմամբ: Սա է հենց շարույթի հնչերանգային կենտրոնը, այսինքն՝ այն բառը, որն իր վրա է կրում շարույթային շեշտը, դառնում է տվյալ կառույցում գլխավորաշեշտը: Սրա ձայնաբանական հատկանիշները գլխավորապես արտահայտվում են շեշտված վանկի տևողության մեծացմամբ: Արտահայտության վերջին շարույթում տևողության մեծացումը ուղեկցվում է նաև տոնային ուրվագծի փոփոխությամբ, որն էլ դառնում է արտահայտության հաղորդակցային նպատակադրման հիմնական գործոնը: Արձակում շեշտված, անշեշտ կամ երկրորդական շեշտ կրող բառային միավորները բաշխվում են հենց ռիթմական կառուցվածքի որոշակի օրինաչափությունների հաշվառմամբ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում արձակի ռիթմական կառուցվածքում շարույթի մեջ մտնող բառերի քանակը, նրանում շարույթային շեշտ կրող բառի ընդգծումը: Սա, բնականաբար, կատարվում է իմաստային ծանրաբեռնվածության

միջոցով, բայց նկատելի է մի օրինաչափություն: Ինչպես բառային շեշտի դրսևորման ժամանակ նկատելի է, որ բառային շեշտը դրվում է վերջին վանկի վրա, այնպես էլ շարույթի մեջ մտնող բառերից հենց վերջինն է, որ ունի ուժգնությամբ առանձնանալու յուրահատկություն: Նկատելի է, որ արձակ խոսքում համեմատաբար մեծ տոկոս են կազմում եռաբառ շարույթները, թեև հանդիպում են նաև 5-6 բառանի կազմավորումներ ևս: Առաջին դեպքում գրեթե լիովին բացակայում են միջբառային դադարները, ինչը չի կարելի ասել բազմաբառ շարույթների մասին: Հետաքրքրական է նաև այն, որ հայերենի հնչաշղթայում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն երկվանկ և եռավանկ բառերը, թեև նորաբանությունների մեջ ավելի շատ հանդիպում են բազմավանկ կազմություններ: Արձակի ռիթմի մեջ համեմատաբար քիչ են այն դեպքերը, երբ շարույթների սահմաններում են կուտակվում շեշտավոր հատվածները. գրեթե միշտ պահպանվում են նրանց միջշարույթային տարածությունները, որոնք էլ փաստորեն անշեշտ հատվածներն են: Ճիշտ է, բառերի իմաստային արժեքը փոխվում է՝ համապատասխան ենթատեքստի և իրադրության, ինչպես նաև գործնական նպատակադրման պահանջներով: Արձակում, ինչպես նաև անհամեմատ շատ չափածոյում, աչքի են ընկնում բառական նույնական օրինակները, այսպես կոչված զուգադրական կրկնություններ, որոնք փաստորեն ռիթմական տպավորություն են ստեղծում:

Հայերենի արձակի ռիթմական առանձնահատկությունների բացահայտման փայլուն նմուշներ են ժողովրդական բանահյուսության նյութերը: Ինչպես չափածոն, այնպես էլ արձակը որոշակիորեն կազմակերպված խոսք է բովանդակությունը բացահայտելու համար:

Դիտարկենք ժողովրդական բանահյուսության մի նմուշ Շիրակի դաշտավայրից:

*Ժամանակայ //մեկ խեղճ// **հալիվորըմ** կար// էս աղքատ **հալիվորը**// հեչ բան չուներ// ինքն էր ու մեկ պառավ կնիկ// Ամեն օր// կերթեր մեշեն// էդ **հալիվորը**// չալի-չուփի// **թուփ կեներ// կը բերեր** քաղաք// որը կըծախեր// որն էլ տունը կը վառեր// էսպեսութունով կը կառավարվեին//*

*Մե օրմ էլ// էս **հալիվորը**/ գնաց էլի մեշեն// **չալի-չուփի**// ինչքան կրցավ// **թուփ էրավ**/ **բերեր** տուն//քշոցեն վար դրեց// վոր առավոտյան տանի քաղաք// **ծախի**...*

*Գիշերը քնան// առավոտյան ելան վեր// **հալիվորը** չալի-չուփին շալակեց// տարավ բազար// ծախեց...*[102]

Եթե բացառենք ավելի փոքր շարույթներ կազմելու հնարավորությունները և վերցնենք ամենից ավելի նկատելի դադարներով ընդհատվող շարույթների սահմանները, միևնույն է, կարող ենք տեսնել, որ շարույթների ձևավորման մեջ ժողովրդական բանահյուսության մեջ օգտագործվող շարույթներում հանդես են գալիս բառային ոչ մեծ ծավալ պարունակող հատվածներ:

Այսպես բառային թվաքանակով ընտրանքը ունի հետևյալ տեսքը.

1 /2 /2/ 3/ 3 /2 /4 /2 /2 /2 /3 /2 /2 /4 /3 /: 3 /5 /2 /2 /4 /3 /4 /1 / : 2/ 3/ 4/ 2/ 1

1-4/4/: 2-12/24/: 3-6/18 /4-5/20/: 5-1/5/:

Արձակ խոսքը թեև ավելի անկաշկանդ է, խոսողին չի դնում որոշակի կաղապարների մեջ, բայց այն էլ ունի իր սահմանափակումները: Ժողովրդական բանահյուսության շատ տեսակներում արձակն ու չափածոն հաջորդում են մեկը մյուսին, ներթափանցում են, ընդմիջարկվում:

Ինչպես տեսնում ենք, առավել շատ են հանդիպում 2-4 բառային կազմությամբ շարույթները և միայն մեկ դեպքում է, որ կարող ենք որոշ պայմանականությամբ խոսել հինգբառանոց շարույթի գործառության մասին: Տեքստում երկբառանոց շարույթները 12-ն են, եռաբառը՝ 6-ը, քառաբառը՝ 5-ը, իսկ մեկբառանի շարույթների թիվը 4-ն է: Ըստ վանկային կազմությունների՝ ամենից ավելի հանդիպում են 5-7 վանկ ունեցող շարույթները, որոնք ծածկում են տեքստի կեսից ավելին:

Ինչն է, որ ռիթմական կառուցվածքի տեսանկյունից մոտեցնում է չափածոյին այս արձակ ստեղծագործությունը: Ամենից առաջ նկատելի են բառային և դարձվածքային միավորների կրկնություններ: Այս կրկնությունները չի կարելի դիտել որպես բանասացի բառապաշարի աղքատություն կամ հոմանիշների սակավություն: Խիստ հազվադեպ են դերանվանական փոխարինումները: Արձակում այս կրկնությունները մեծապես պայմանավորված են տեքստի ներքին ռիթմական կառուցվածքի բացահայտմամբ, միևնույն ժամանակ մի քանի առանձին հասկացությունների ճշտմամբ և հավաստիությամբ : Տեքստը, ուր մոտ 7 տասնյակ բառային միավորներ կան, միայն 2 տասնյակից մի փոքր ավելին է, որ հանդես են գալիս առանձին, առանց կրկնության: Այսպես, կան բառեր՝ որոնք այս փոքրիկ հատվածում հանդես են գալիս 3 և ավելի անգամ *մեկ, էս, էլի, ծախել*, իսկ *հաշիվ* բառը կրկնվել է 5 անգամ:

Լեզվի պատմության տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում այն իրողությունը, որ ժողովրդական բանահյուսության տեքստերի համեմատությամբ գրական լեզվում համեմատաբար բարձր տոկոս են կազմում ավելի շատ բառային միավորներից կազմված շարույթները: Մեր կողմից ուսումնասիրված պատմողական բնույթի նախադասություններում շարույթների բառային կազմը տալիս է հետևյալ ցուցանիշները: Բոլոր շարույթների ընդհանուր քանակը 53 է: Սրանց մեջ մեկ բառով կազմված շարույթների թիվը չորսն է: Երկբառ և քառաբառ շարույթները գրեթե հավասար են՝ համապատասխանաբար 11 և 12 շարույթներ: Շարույթների գերակշիռ մասը եռաբառ շարույթներն են: Սրանց ընդհանուր թիվը 22 է: Եռաբառ շարույթների նման բաշխվածությունը զարմանալիորեն ներդաշնակ է բառային շեշտի դրսևորմանը, երբ արձակում երկու անշեշտներին հաջորդում է մեկ շեշտակիր վանկ:

Չորս բառից ավելի շարույթներ հանդիպում են հազվադեպ: Դիտարկվել են 5 բառ պարունակող երեք և 6 բառ պարունակող մեկ շարույթ:

Այսպիսով, հայերենի եռավանկ շարույթները ծածկում են տեքստի 40 տոկոսից ավելին:

Հայերենի արձակ խոսքի ռիթմական կառուցվածքի ուսումնասիրության համար թերևս նպատակահարմար է քննել շարույթներում հանդես եկող շեշտված և անշեշտ վանկերի հարաբերությունը:

Նախ պետք է նկատել, որ շարույթների երկարությունը տալիս է բավականին տարբերություններ ինչպես նրա մեջ մտնող բառերի քանակի, այնպես էլ շեշտակիր բառերի բաշխվածության առումով:Շեշտի խնդիրները շոշափվում են երկրորդ գլխի յոթերորդ ենթագլխում:

Յուրաքանչյուր լեզու ունի բառերի արտասանության իրեն բնորոշ արտահայտությունները: Լեզուներում բառային շեշտի դրսևորումները տարբերվում են ինչպես իրենց բնույթով, այնպես էլ գործառությամբ: Մի շարք լեզուներ ունեն բառային շեշտի արտահայտության կայուն շափանիշներ, մյուսներում՝ տարաբնույթ արտահայտություններ: Այսպես, չեխերենում միշտ շեշտը ընկնում է բառի առաջին վանկի վրա, իսկ ռուսերենում այն փոփոխական է, և երբեմն շեշտի փոփոխությունը բառերի իմաստային հակադրություն է առաջացնում: Ըստ բնույթի՝ լեզուներում սովորաբար բառային շեշտերը ունեն որոշակի կայուն հատկանիշներ՝ ուժգնության կամ դինամիկ, երաժշտական կամ տոնիկական, քանակային կամ տևողական, մինչդեռ շվեդերենում միաժամանակ գործում են և՛ ուժային, և՛ երաժշտական շեշտերը:

Գրական հայերենի բառային շեշտը ըստ բնույթի ուժային է, ըստ դիրքի՝ վերջնավանկային: Այս կանոնը չնչին բացառություններով գործում է հայերենի բնիկ բառերի ողջ զանգվածի համար: Բացառություն կազմող բառերի մեծ մասը նույնպես ենթարկվում է այս ընդհանուր օրինաչափությանը՝ երբեմն դրսևորելով երկակի արտասանություն:

Հայերենի բառային շեշտի կանոնը առանց բացառության տարածվում է օտար լեզուներից կատարված փոխառությունների վրա: Այն ընդգրկում է փոխառյալ բառերի ինչպես ուղիղ, այնպես էլ թեքված ձևերը:

Լիովին չիմնավորված պետք է համարել դեռևս հիշատակվող լեզվական այն դրույթը, թե օտար բառերի փոխառության դեպքում բառերի ուղիղ ձևերում պետք է պահպանել փոխատու լեզվի շեշտադրությունը: Նախ՝ հայերենը կարող է փոխառյալ բառեր ընդունել աշխարհի ցանկացած լեզվից, և գործնականում անհնարին է տիրապետել այդ բոլոր լեզուներին: Երկրորդ, փոխառությունների մեծ մասը հայերեն է մտնում ոչ թե արտասանական, այլ գրային ճանապարհով, այսինքն՝ մենք գործ ենք ունենում ոչ թե տառադարձման, այլ գրադարձման օրենքների հետ: Այսպես, եթե մենք օտար Վաշինգթոն/Վաշինգտոն բառը վերցնենք բնիկ արտասանությամբ, ապա շեշտը կընկնի նախընթեր վանկի վրա (Ուաշինգթըն), մինչդեռ գրադարձման դեպքում այն պահպանում է հայերենին բնորոշ արտահայտությունը:

Պետք է նշել նաև, որ հաճախ շեշտի դրսևորում են համարում հնչաշղթայում բառերի իրացման ժամանակ գործառվող տոնի փոփոխությունները կամ շարույթային ու

իմաստային շեշտերին բնորոշ դրսևորումները, որոնք բառերից ավելի մեծ, բարձր մակարդակի դրսևորումներ են և ուղղակիորեն չեն կապվում բառային շեշտի հետ:

Գրական հայերենի կանոնից կատարվող շեղումները դուռ են բացում ցանկացած բնույթի կամայականությունների առջև:

Անցյալ դարի կեսերին արևելահայ գրական լեզվի զարգացումը հիմնականում պայմանավորված էր ռուսաց լեզվի իրողություններով. գրական հայերենի փոխառությունները հիմնականում կատարվում էին ռուսերենից և ռուսերենի միջոցով

Գրական արևմտահայերենը շատ ավելի կախվածություն ուներ այն լեզուներից, որոնց տարածքներում համեմատաբար հոծ զանգվածներով գոյատևում էին հայ համայնքները: Սրանց գործածած բառային ձևերը շատ ավելի մեծ տարբերություններ էին տալիս գրական արելահայերենի համեմատությամբ՝ պայմանավորված փոխատու լեզվի, ինչպես նաև արևմտահայերենի հնչյունական համակարգի առանձնահատկություններով: Սա էլ իր հերթին էլ ավելի էր խորացնում գրական երկու տարբերակների անջատվածությունը:

Նորանկախ Հայաստանը արդեն ունի լեզվի գործառության իր քաղաքականությունը, մյուս կողմից՝ աշխարհը «փոքրացել է», և տեղեկությունների հեղեղը իրականացվում է ամենատարբեր լեզվական համակարգերով: Այս պայմաններում հայերենում օտար բառերի ուղիղ և թեքված ձևերը պահպանում են մայրենիին բնորոշ հնչարտաբերությունը:

Ինչ խոսք, եթե հաղորդակցումը կատարվում է օտար լեզվով, խոսողը պետք է պահպանի այդ լեզվի կանոնները: Եթե այս ճիշտ է օտար լեզուների համար, ապա ճիշտ է նաև հայերենի համար: Հայերենի օրինաչափռությունների խախտումները, նրա համակարգից կատարվող շեղումները լրջորեն վտանգում են հայերենի կանոնական վիճակը և լայն ճանապարհ բացում լեզվական կամայականությունների առջև: Նման փոխանցումները հայերենի մեջ ինչպես արտասանական, այնպես էլ գրային մակարդակներում պետք է համարել օտարաբանություններ, որոնք լրջորեն խաթարում են հայերենի հնչական համակարգի օրինաչափությունները: Ահա թե որտեղ պետք է խոսել մայրենիի անաղարտության մասին:

Նրանք, ովքեր խոսում են հայերենի շեշտի տեղայնացման փոփոխությունների մասին, իրականում նկատի ունեն ոչ թե հայերենի բառային շեշտը, այլ հնչաշղթայում շեշտի դրսևորման առանձին դեպքերը, որոնք պայմանավորված են մի կողմից շեշտի դրսևորման շարույթային կամ տրամաբանական արտահայտություններով, մյուս կողմից՝ պարզապես հայերենի արտասանական կանոնից կատարվող շեղումներով:

Հայերենում բառից մեծ հնչյունական պատկերների ուսումնասիրության համար հարկավոր է հստակորեն առանձնացնել դիտարկման ելակետային միավորներ: Բառային շեշտի բնույթի բացահայտման ժամանակ առաջնորդվել ենք երեք հիմնական պարամետրերի հարաբերությունների համադրմամբ: Սրանց մեջ առաջնայինը ուժգնությունն է և, երկրորդաբար, տևողության ու տոնայնության պարամետրերը:

Բառում դրսևորվող տոնային ուրվագիծը չունի ինքնուրույն ընդգծման արժեք և ողջ հնչաշղթայի տոնային կազմակերպվածության, նրա տոնային կորի մի մասն է կազմում: Բառի սահմաններում ո՛չ տոնը, ո՛չ էլ հնչյունի տևողության երկարացումը չունեն իմաստատարբերակիչ կամ ընդգծման արժեք, եթե ինքնին ավելի մեծ միավորի արժեքով չեն հանդես գալիս: Չկա բառի համար այդ հատկանիշների հակադրմամբ նոր բառական միավորներ ստանալու հնարավորություն: Այս միտքը, սակայն, դեռևս չի նշանակում, թե բառում կամ հնչադասության մեջ հնչական այս կամ այն հատվածի ընդգծման, առանձնացման համար տոնայնությունը կամ տևողությունը չեն կարող լինել առաջնային: Սրանք հիմնականում առաջնային են բառից ավելի մեծ միավորներում՝ շարույթներում և հնչադասության հաղորդակցական տեսակներում հուզազգացական այլազան երանգների դրսևորման ժամանակ: Ցանկացած լեզու ունի հնչաշղթայում ֆիզիկական հատկանիշների որոշակի բաշխվածության ինքնատիպ համակարգ իմաստակիր միավորների կազմավորման ու արտահայտման համար: Քանի որ տոնը և տևողությունը հայերենում հանդես են գալիս բառից ավելի մեծ միավորների, այն է՝ շարույթների ու նախադասությունների առանձնացման ու ընդգծման համար, ուստի անհրաժեշտություն է առաջանում գտնել նաև սրանց համար բնորոշ հատվածներ, համադրման եզրեր: Ուժգնության գործոնը, հատկանիշ, որ հանդես է գալիս բառի կազմավորման ժամանակ, երբեմն կարող է խիստ ցայտուն արտահայտություն չստանալ, բայցի այդ՝ այն միշտ ունի պոտենցիալ մեծ էներգիա և կարող է արտահայտվել առաջին իսկ հնարավորության կամ անհրաժեշտության դեպքում: Տոնայնության կորի փոփոխությունները շատ հաճախ միահյուսվում են տևողության համապատասխան փոփոխություններով և առաջին հերթին պայմանավորում նախադասության հաղորդակցական նպատակադրման գործառությունը: Նեղ առումով սա հենց հնչերանգն է՝ հիմնական տոնի մեղեդայնության կորը: Այս դեպքում ո՛չ խոսքի ռիթմը, ո՛չ տեմպը նախադասության հաղորդակցական միավորի առանձնացման համար չունեն էական նշանակություն, սրանք կամ լրացական են կամ լիովին հավելուրդային:

Տոնայնության կորի փորձառական տվյալների գնահատման համար, մեր կարծիքով, պետք են մի շարք հատկանիշներ,որոնցից առաջինը տոնի ուղղությունն է՝ դիտարկվող հատվածի սկզբից մինչև ավարտը:

Այս հատվածում տոնը կարող է հանդես գալ զանազան ձևափոխություններով: Նախ ուղիղ է այն տոնը, ուր կորի նկատելի շեղումներ չկան, իսկ՝ հնչման արագացումը և դանդաղեցումը էական նշանակություն չունեն: Տոնը կարելի է համարել իջնող, եթե սկզբի համեմատությամբ մինչև ավարտը նկատելի է տոնի անկում: Տոնը կարելի է համարել բարձրացող, եթե հատվածի ավարտը սկզբի համեմատությամբ ունի կորագծի բարձրացում

Առանձնացվող երեք հիմնական տոներին կարող են միանալ բազմաթիվ ենթատեսակներ. նախ թե՛ բարձրացող և թե՛ իջնող տոները կարող են ունենալ տարբերություններ ընդգծվող հատվածների տևողության առումով. ասենք, կարող է լինել

բարձրացում, որը սկսում է անմիջապես առաջին վանկից կամ կարող է լինել բարձրացում, որ վերաբերում է միայն հատվածի վերջին վանկին. նույնը կարող է նկատվել նաև իջնող տոնով հատվածներում, երբ տոնի իջեցում նկատվում է անմիջապես հնչվող հատվածի սկզբնամասում կամ միայն վերջնամասում: Տոնը կարող է լինել բարձրացող-իջնող, ինչպես նաև իջնող-բարձրացող՝ իրենց ենթատեսակներով, ասենք՝ ալիքաձև և այլն:

Տոնի փոփոխություն կարելի է արձանագրել ըստ մակարդակների՝ վերին, ստորին և միջին: Վերին մակարդակը փաստորեն հիմնական տոնի բարձր հաճախականության դեպքերն են, ասենք, կանացի ձայները, տղամարդկանց բարձր ձայները (տենոր),ստորին մակարդակ՝ տղամարդկանց թավ ձայները (բաս), միջին մակարդակ՝ կանացի շատ ցածր ձայները, տղամարդկանց սովորական (բարիտոնին մոտ) ձայները: Սա, իհարկե, մոտավոր բաժանում է: Սրանք միաժամանակ ոչ այնքան ձայների սեռային տարբերակման, զանազանման միջոց են, որքան հաղորդակցական տիպերի ենթադրվող տարորոշման եղանակ: Ասենք, կարելի է կանխագուշակել, որ հայերենի պատմողական հաղորդակցական տիպի մեջ մտնող նախադասությունները հիմնականում պետք է ունենան միջին, երբեմն ստորին մակարդակի դրսևորումներ, մինչդեռ հարցական և հրամայական նախադասությունների դեպքում թերևս ավելի կանոնական լինեն միջին և վերին մակարդակների դրսևորումները: Ինչպես այս պարամետրի, այնպես էլ ուրիշների դիտարկումների ժամանակ նկատելի են պատկերների զանազանություններ՝ պայմանավորված իմաստային և զգացական դրսևորումների բազմազանությամբ:

Տոնի փոփոխությունները կարող են ունենալ նաև աստիճանական բնույթ: Այսինքն՝ նույն կորային պատկերը կարող է հանդես գալ միայն մեկ մակարդակի սահմաններում կամ էլ ընդգրկել երկու և նույնիսկ երեք մակարդակների սահմանները միաժամանակ: Ունի՞ արդյոք սա լեզվական համակարգային բնույթ, թե՞ այն պայմանավորված է խոսողի անհատական հատկանիշների բնութագրական դերով, դեռևս մնում է չբացահայտված, սակայն կասկած չկա, որ այն կրում է իրազեկման որոշակի արժեքային հատկանիշ:

Փորձառական ուսումնասիրությունների ժամանակ ստացված նյութի գնահատման առումով հետաքրքրություն կարող է ներկայացնել տոնի փոփոխության ընթացքը կամ արագությունը, որը նույնպես կարող է ունենալ աստիճանավորումներ: Ամեն մի կոնկրետ դեպքի համար կարելի է ենթադրել նման կարգի փոփոխությունների որոշակի դրդապատճառներ: Ունե՞ն այս փոփոխությունները հաղորդակցական տիպերի կաղապարավորման գործառական արժեք, թե՞ դրանք նպաստում են նախադասության հաղորդակցական բնույթի լրացական արժեքին, տալիս են արդյոք խոսքին սրանք իմաստային կանխենթադրության ինչ-ինչ հատկանիշներ, թե՞ ունեն խոսքի անհատական հատկանիշների ու մտադրությունների գնահատման արժեք, նույնպես կարելի է քննարկել:

Հնչերանգի բաղկացուցիչ մասերից է տեմբրը (ձայնի երանգը), որը դիտարկվում է երկրորդ գլխի ութերորդ ենթագլխում: Տեմբրը խոսքի անհատական հատկանիշ է: Տեմբրը խոսքի հնչյունների արտաբերման որակն է, նրա հստակության աստիճանը: Յուրաքանչյուր անհատի բնորոշ է խոսքային միավորներ կազմելու ինքնատիպությունը՝ պայմանավորված նրա անհատական առանձնահատ-կություններով: Բայց տեմբրի փոփոխությունները նկատելի են և կապվում են նաև մարդու հոգեկան և առողջական վիճակների փոփոխությունների հետ՝ հուզում, զայրույթ, ուրախություն, վիշտ և այլն: Տեմբրի փոփոխությունները կարող են իրենց ազդեցությունը ունենալ նաև հնչաշղթայի մյուս բաղադրիչների արագության կամ ռիթմական կառուցվածքի վրա: Տեմբրի փոփոխությունների մեծ մասը հենց կապվում է արտալեզվական գործոնների հետ:

Տեմբրի փոփոխություններ կարող են դրսևորվել հնչաշղթայի բոլոր բաղադրիչներում: Տեմբրի փոփոխությունների մեծ մասը կապվում է արտալեզվական գործոնների հետ:

Ձայնաբանական ուսումնասիրություններում մարդուն բնորոշ անհատական խոսքի դրսևորումները սովորաբար դիտարկում են ձայնավորների երրորդ ֆորմանտից հետո առանձնացվող էներգիայի կուտակման գոտիներում (հարմոնիկներում):

Տեմբրի գնահատման ժամանակ անհրաժեշտ է նկատի առնել այն, որ նրա կազմավորմանը մասնակցում են ինչպես հատույթային, այնպես էլ վերհատույթային բաղադրիչները: Բոլոր դեպքերում պետք է կարծել, որ անհատական փոփոխությունները կանոնավոր բնույթ ունեն և մտնում են անհատի խոսքային համակարգի մեջ՝ լայն առունով ենթարկվելով լեզվի հնչական համակարգի առանձնահատկություններին: Յուրաքանչյուր անհատի հատուկ են միայն նրան բնորոշող տեմբրային հատկանիշներ: Հայերենում տեմբրի ուսումնասիրության բազմաթիվ հարցեր դեռևս բավարար լուսաբանում չեն ստացել:

Ատենախոսության եզրակացությունները հետևյալներն են.

1. Գրական արևելահայերենի հնչույթները 36 –ն են, որոնցից ձայնավորները 6-ն են՝ ա,օ, է, ու, ի,ը: Հայերենի բոլոր ձայնավորները լիակատար հնչույթներ են, կազմում են իմաստատարբերակիչ հակադրություններ և սրանց մեջ ը-ի հնչույթայնությունը կասկած չի հարուցում:

2. Ձայնավորները ունեն իրենց տարածական ոլորտները, որոնք մասնակի դեպքերում են խաչավորվում:

3. Բաղաձայնները ունեն իրենց կազմավորման հիմնական տեղը; Սրանց մասնակի տեղաշարժերը ներկայացված են ատենախոսության մեջ բերված աղյուսակում:

4.Գրական արևելահայերենում վանկարար են ձայնավորները: Հնչաշղթայում իրար հաջորդող ձայնավորները բաժանվում են տարբեր վանկերի: Հայերենում ձայնորդները վանկարար չեն:

5. Գրական արևելահայերենում բառասկզբում մեկ վանկում կարող են հանդես գալ մինչև 3 բաղաձայն՝ ստվե-րոտ, զգա-լի, Ստրա-բոն: Նման հնչարտաբերությունը

գործառվել է հայերենի հնագույն շրջանում և նորակազմություն չէ: Արևմտահայերենում նման կազմությունները ստանում են ը հենարանը:

6. Հայերենի վերհատույթային միավորներից դադարը՝ որպես հնչման ընդհատում, բաշխվել է հետևյալ կերպ՝կարճ՝ մինչև 100հզ/վկ, միջին 100-500հզ/վրկ և բարձր 500հզ/վրկ-ից բարձր տևողություն: Դադարի կարճ տեսակը հանդիպում է հնչադասության տրոհվող շարույթների, միջինը՝ եզրային շարույթների, իսկ երկարը՝ նախադասությունների ու պարբերությունների միջև:

7. Վերհատույթային միավորներից ռիթմը հանդես է գալիս ոչ միայն չափածոյում , այլև արձակում: Ռիթմը առաջանում է տեքստի պարբերաբար կրկնվող հատվածներով:Հայերենում դրանք շարույթներում շեշտված և անշեշտ վանկերի պարբերական կանոնավոր կրկնվող հաջորդականություններ են:

8. Հնչաշղթան իրացվում է որոշակի ժամանակահատվածում: Հնչաշղթայի տարբեր հատվածներում արագության տարբերությունները պայմանավորված են հաղորդման բովանդակությամբ: Փորձերը ցույց են տալիս, որ հայերենի խոսքի արագությունը համեմատաբար դանդաղ է ռուսերենից:

9. Հայերենի հնչաշղթայում տարբերակվում են բառային, շարույթային և նախադասության շեշտեր: Հայերենի բառային շեշտը ըստ բնույթի ուժային է, ըստ տեղի՝ վերջնավանկային: Օտար լեզուներից փոխառված բոլոր բառերի ու նորաբանությունների ուղիղ ու թեքված ձևերում պահպանվում է հայերենի բառային շեշտի գրական կանոնական կաղապարը:

10. Հնչերանգի հիմնական բաղադրիչներից մեկի՝ տոնայնության կորի փոփոխությունները դասակարգվել են ըստ ուղղության՝ ուղիղ, բարձրացում, իջեցում, ,ըստ մակարդակների՝ վերին, միջին, ստորին՝ ըստ վերջինների ընդգրկման աստիճանների և հնչաշղթայի առանձին հատվածների հնչման արագության:

11. Հայերենում խոսքի անհատական առանձնահատկությունների՝ տեմբրի բացահայտման համար հնչաշղթայում կարևորվում են երրորդից բարձր ֆորմանտային գոտիները: Տեմբրի բացահայտման համար, բացի լեզվական միջոցներից, կարևորվում են նաև արտալեզվական հատկանիշները: Հայերենում տեմբրի արտահայտության բազմաթիվ հատկանիշներ դեռևս բավարար լուսաբանություն չեն ստացել:

12. Հայերենի ուսումնասիրության մեջ կարևորվում են գրական երկու լեզուների հնչյունական համակարգերի կապակցված քննությունը, սրանց մերձեցման հնարավորությունը: Կարևորվում են նաև յուրաքանչյուր տարբերակում միասնական լեզվական կանոնների մշակումն ու կիրառումը:

13. Լեզվում կատարվող փոփոխությունների զգալի մասը կապվում է բառային կազմի հետ: Այստեղ թերևս կարևորվում է այն, որ նորակազմությունները պետք է հատուկ խնամքով ընտրվեն, դառնան մասնագիտական քննության առարկա և նոր հանձնվեն հասարակության դատին: Խնդիրը երկակի բնույթ ունի: Մի կողմից հայերեն նորակազմությունը հարստացնում է լեզվի բառային կազմը, հայերենին ոչ բնորոշ

հնչարտաբերական ձևը փոխարինում մեր լեզվին հարազատ հնչական ու իմաստային կազմությամբ, եթե այն հաջողված կազմություն է, մյուս կողմից՝ այն լրացուցիչ դժվարություն է հարուցում գրական լեզուն գործնականում յուրացրած մարդկանց համար, հատկապես եթե այն շինծու կազմություն է և էլ ավելի է խորացնում առօրյա-խոսակցական ու գրական լեզուների տարբերությունը՝ արագացնելով գրականի մահը:

14. Հայերենի գործառության ներկա ժամանակաշրջանը աչքի է ընկնում նաև հապավական կազմությունների գործածության նկատելի ընդլայնմամբ: Գրավոր ճանապարհով մեր լեզվի մեջ մուտք գործած բազմաթիվ նման ձևեր իրենց ազդեցությունն են գործում սրանց բանավոր տարբերակների հնչման և գործածության վրա: Առանձին տառային հապավումներ հնչվում են գրադարձության կանոնով, ուրիշները, եթե կազմությունը փոխառյալ է, օտար լեզվի այբբենական հնչադարձմամբ: Հապավման ուղիղ ձևը կարող է հնչվել ինչպես ուղղական, այնպես էլ սեռական-տրական հոլովով՝ Ուղևորվել ԱՄՆ և ԱՄՆ կառավարություն կամ ԱՊՊԱ՝ որպես Ավտոսեփականատերերի Պատասխանատվության պարտադիր ապահովագրություն և ԱՊՊԱ պայմանագիր, Ըստ ԱԱԾ մեր աղբյուրների, Ընդունվեց ԱԱԾ և այլն:

15. Հնչաշղթան չի կարելի պատկերացնել առանց այն պայմանների, այն արտալեզվական միջոցների որոնք ուղեկցում են խոսքին: Իհարկե, շարժանշանները և դիմախաղը կարող են ինչպես ուղեկցել, այնպես էլ զուգակցվել ու ընդմիջվել խոսքում: Հնչաշղթայի իրացման ժամանակահատվածում կարելի է առանձնացնել հարալեզվական նշանների հետևյալ տեսակները ա) գործառվում են խոսքի նախորդման, լռության ժամանակ, բ) խոսքի ընդհատման, ընդմիջման ժամանակահատվածում, գ) խոսքի ընթացքում, զուգահեռաբար:

16. Փորձառական ուսումնասիրության ենթարկված նախադասությունները զուրկ են իրավիճակները ռեալ արտահայտելու հնարավորությունից, սրանք մեծապես պայմանավորված են փորձարկվողի լեզվազգացողությամբ: Նույն հնչադասության վերարտադրությունը միևնույն հաղորդավարի մոտ կարող է առաջացնել ամենատարբեր տարբերակներ, որոնք արդյունք են գրավոր խոսքի նրա ընկալման հուզական-արտահայտչական և իրադրության գնահատման առանձնահատկությունների: Ի տարբերություն բանավորի՝ գրավոր խոսքը միշտ էլ հնարավորություն է տալիս նորովի մոտենալ ու գնահատել արտահայտությունը, այդ պատճառով էլ ստացված արդյունքները միայն արտահայտության հնչական կողմի բնութագրումներ են , քանի որ փորձարկվողը միայն վերատարող է և ոչ թե բանավոր ստեղծագործող:

17. Ժամանակի ընթացքում հնչերանգային կառույցները որոշակի փոփոխությունների են ենթարկվում: Այսպես, վերջին տասնամյակներում Հայաստանի եթերում հնչվող խոսքում, հատկապես երիտասարդական ռադիո - հեռուստատեսային հաղորդումներում, նկատելի են մինչ այդ չգործառված, սակայն այժմ ավելի հաճախական հնչերանգային կառույցներ, ուր զգալի է անգլերենի ազդեցությունը:

18. Հնչերանգային կառույցների տարբերություններ նկատելի են հայերենի երկու գրական տարբերակներում՝ արևելահայերենում և արևմտահայերենում:

Մեր երկու գրական լեզուների հնչաշղթաներում կան ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Արևմտահայերենի ուսումնասիրությունը մեծապես կնպաստի ինչպես հայերենի միասնական լեզվական օրինաչափությունների հաստատմանը, այնպես էլ երկու գրականների մերձեցմանը: Հայերենի հնչաշղթայի ուսումնասիրության արդյունքները կարող են ունենալ ընդհանուր տիպաբանական նշանակություն և օգտագործվել համընդհանուր լեզվական կաղապար հասկացության համար:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրատարակումներում.

1. Հայերենի հնչաշղթան, ՀՀԳԱԱ «Գիտություն», 2009, 156 էջ:
2. Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը, Ե.,ՀՍՍՀ ԳԱ հրատ.1983, 183 էջ:
3. Հայերենի շարույթային շեշտը, «Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում» ժողովածու, Ե.,ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978,էջ 171-206:
4. Հայերենի հնչույթների կապակցելիությունը գրային և արտասանական մակարդակներում, Լեզվի և ոճի հարցեր, 11, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988,էջ 69-135:
5. Փորձառական հնչյունաբանության աշխատանքները Հայաստանում, Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Ե.,ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1983, էջ 183:
6. Գրական հայերենի շեշտը, Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, 2, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 153-159:
7. Գրության և արտասանության փոխհարաբերությունը, Նյութեր Մաշտոցյան գրերի 1600-ամյակին նվիրված գիտաժողովի, Ե., «Զանգակ» հրատ, 2005, էջ 37-40:
8. Հայերենի հնչույթաբանության հարցեր, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն,պրակ Ե, «Լինգվա» , 2006, էջ 137-140:
9. Շարույթի ըմբռնման հարցի շուրջը, Գիտական կոնֆերանսի նյութեր, Ե., ՀՍՍՀ ԳԱ, հրատ., 1975, էջ 17-18:
10. Ժամանակակից հայերենի բառային շեշտի բնույթը, Լեզվի ու ոճի հարցեր, 3, Ե.,ՀՍՍՀ ԳԱ, հրատ., 1975 էջ 123-207:
11. Լոռու խոսվածքի հնչույթային համակարգն ու ինտոնացիան / Ա.Խաչատրյանի հեղինակակցությամբ/, ՊԲՀ, 3, 1974:, էջ 155-165:
12. Խոսքի տեմպը, /Ա.Խաչատրյանի և Հ.Զաքարյանի հեղինակակցությամբ/ ԼՀԳ, 6. 1974, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ. էջ 106-110:
13. Հայերենի բառային շեշտը, ԼՀԳ, 2, 1971, Ե.ՀՍՍՀ, ԳԱ հրատ. էջ 60-64:
14. The interrelation of the written and spoken levels at the Armenian language,6 FASE Simposium, Sopron 1985.
15. The statistical analysis of initial consonant clusters in Armenian.Prosieedigs 11 the ICPhS,v. 3, Tallin, 1983, էջ 234-23:

16. Невербальные средства общения в армянской среде Национально-культурная специфика речевого общения народов СССР, Москва, Изд.”Наука”, 1982, стр. 93-101. /Соавтор А.Хачатрян/.

17. Հարալեզվական միջոցները հայկական միջավայրում/Ա.Խաչատրյանի հեղինակակցությամբ/, ԼՀԳ. 7. Ե., 1978, էջ 60-70:

18. Языковые контакты и произношение начальных сочетаний согласных в армянском языке. Конференция по вопросам взаимоотношения и развития языков Закавказия. Тезисы докладов и сообшений. Изд. Арм. ССР, Е.,1977, стр.48-49.

***19.* Բառասկզբական բաղաձայնական կուտակումները և վանկատումը, SLOVO, vol 26-28,Paris,1999, INALCO, էջ 155-157:**

Тохмахян Роберт Маркосович

ЗВУКОВАЯ ЦЕПЬ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10.02.01 - Армянский язык.

Защита состоится 14 ноября 2011 года в 14.00 по адресу, г. Ереван ул. Григора Лусаворича 15, на заседании специализированного совета 019 ВАК в Институте языка им. Гр. Ачаряна Национальной академии наук РА.

РЕЗЮМЕ

Изучение звуковой системы армянского языка традиционными методами проводилось с древних времен. Явления фонетической системы широко представлены в работах Гр.Ачаряна, М.Абегяна, Гр.Капанцяна, Г.Джаукяна и Э.Агаяна. Однако широкие экспериментальные исследования фонетики армянского языка были начаты с середины 60-ых годов прошлого века в Институте языка АН Армении под руководством доктора филологических наук А.А.Хачатрян.

Данная работа обобщает все экспериментальные исследования, проведенные в течение нескольких десятилетий с одной стороны, а также результаты собственных исследований автора в области просодии армянского языка. Обьектамы изучения стали

как бинарные противопоставления фонем, так и особенности слога, фонетического слова, синтагмы, а также единицы суперсегментного уровня - ударение, ритм, темп.

Работа состоит из предисловия, двух глав и выводов. В конце представлен список использованной литературы. В предисловии дается история вопроса, оценивается вклад ученых-арменистов в данной области.

Первая глава посвящена сегментным единицам современного восточноармянского литературного языка. Она разделена на 6 разделов. В первом из них автор рассматривает основные принципы классификации фонем, определяется подход автора к ним. Автор разделяет теорию Щербы в трактовке фонемы.

Во втором разделе описывается система гласных армянского языка. Дается их акустическое описание на основе спектрального анализа. Данные представлены в виде таблицы. В ней наряду с кардинальными гласными (а, о, у, э, и) представлена гласная ը, фонематичность которой в армянском языке не вызывает сомнения. Важно от**мет**ить, чт**о** каждая из гласных имеет свое поле вариативности, которые частично пересекаются.

В литературном армянском языке нет дифтонгов. Сонорные не имеют слогообразующие функции.

В третьем разделе обсуждены вопросы классификации согласных. Даются минимальные оппозиции по способу и месту образования. Отмечается, что согласные армянского языка не делятся на простые и сложные, и все так называемые сложные согласные являются подсистемой смычных согласных, противопоставляемых остальным как единые фонемы.

В четвертом разделе обсуждается взаимоотношение между письменной и устной речью. Письменная речь должна наиболее адекватно отражать произношение. Однако это соотношение часто нарушается. Примечательно, что в письменной речи армянского языка употребляется гораздо больше пунктуационных знаков, чем в аналогичных случаях в других языков.

В пятом разделе представлена структура слога армянского языка, типы слогов и их распределение в слове. Для восточноармянского литературного языка признается наличие определенного типа сочетаний согласных. В армянском языке зарегистрированы 16 типов слогов, из которых примерно 4 процента содержат скопления согласных. Автор считает, что эти типы сочетаний согласных не являются заимствованными и нововведениями, а восходят к древнеармянскому языку.

В шестом разделе рассматриваются бинарные противопоставления фонем и особенности их релизации в речи; в частности, признается в армянском, наличие противопоставления смычных и смычнофрикативных.

Вторая глава состоит из восьми разделов, посвященных суперсегментным единицам.

Наименьшей смыслоразличительной единицей звуковой цепи считается синтагма, которая выделяется различными просодическими средствами.

Второй раздел посвящен функционированию паузы в речевой цепи. Она рассматривается как супрасегментная единица, которая накладывается на звучащий текст и выделяется в различных функциях. Различаются паузы трех видов: короткие (до 100 мсек), средние (до 500 мсек) и длинные (более 500 мсек).

В третьем и четвертом разделах обсуждаются вопросы темпа речи как в теоретическом плане, так и в практическом, где выявлены результаты экспериментального исследования автора, проведенного в лаборатории Института языка АН Армении. Представлены результаты эксперимента, где сопоставляются аналогичные тексты восточноармянского и русского языков. В качестве экспериментального материала были выбраны одинаковые по обьему тексты в произношении дикторов радио и телевидения, а также подготовленная и спонтанная речь носителей двух языков. Выявлено, что в основном армянская речь характеризуется более медленным темпом по сравнению с русской, хотя дикторская речь заметно быстрее.

В пятом и шестом разделах обсуждаются вопросы ритма. Ритмической единицей считается некая упорядоченность ударных и безударных слогов в речи. Хотя ритмичность больше характерна для поэзии, но она действует также и в прозе. В работе трактуются различные ритмические структуры из поэтических произведений известных армянских поэтов. Если в поэтической речи характерно выделение ударных слогов и строк, то для прозаического текста более характерен временной фактор, при котором отрезки речи стремятся быть одинаковыми по протяжности. В исследованных прозаических произведениях народного творчества часто заметны речевые повторы, которые могут рассматрыватся как ритмические единицы.

Седьмой раздел посвящен ударению армянского языка. Словесное ударение, подтвержденное данными экспериментального анализа, является динамическим, по месту оно фиксировано на последнем слоге слова. Слова, содержающие 6 и более слогов приобретают вторичное ударение. Фиксированное ударение распространено и на заимствованные слова современного армянского языка. Кроме словесного различаются синтагматическое и фразовое ударения. Синтагма, как выделенная часть речи, имеет более четкие характеристики ударения по сравнению со словесным. Заметно также, что в синтагматическом и особенно во фразовом ударении, наряду с динамическим важен фактор длительности.

Последний раздел этой главы описывает вопросы тембра речи. Это индивидуальный признак носителей языка и он мало изучен в лингвистическом аспекте. В звуковом спектре признаки тембра выявляются в более высоких формантах (третьем и выше). Индивидуальные особенности произношения специфичны.

В разделе “Выводы” дается общая оценка полученных результатов, определяются направления дальнейших исследований, пути сближения фонологических систем двух литературных армянских языков .

Robert Tokhmakhyan

The Sound Chain of the Armenian Language

The thesis claiming a scientific degree of a doctor of philological sciences on the speciality 10.02.01-Armenian Language.

The defense will be held on November 14. 2011 at 14.00 at the Address 0015, Yerevan, Grigor Lusavorich. Street, 15, Institute of Language named after H. Acharyan of the National Academy of Sciences, at the session of Special Council 019 HAC.

SUMMARY

The description of the phonetic system of the Armenian language by traditional methods goes back to the ancient times. Many of phonetic issues of the Armenian language are widely described in the works of armenologists: H.Acharyan, M. Abegyan, G. Kapantsyan, E.Agayan, G.Djahukyan, Yet the experimental investigation of the phonetic system of the Armenian language began in the 60 ies of the twentieth century at the Institute of Language, National Academy of Sciences under the leadership of doctor of philology Amalia Khachatrian.

The present work is a comprehensive presentation of all the experimental investigation carried on in this field of Armenian linguistics, it includes also the results of the experiments carried on by the author in the field of prosody of the Armenian speech. The dissertation presents both the segmental and supersegmental levels of the Armenian language, which is absolutely a new way of description of the phonetics. The thesis consists of an Introduction and 2 main chapters, subdivided into several paragraphs. The Introduction gives the history of the problem, innumerates all the authors, who had huge investment in the general problem. The first paragraph is devoted to the phonemes of the contemporary literary Eastern Armenian (EA). It is devided into 6 subtitles. In the first of them the basic principles of classification of phonemes are presented. The author expresses his own viewpoint to the theory of phoneme. He accepts

Shcherba's conception of the phoneme which is based on the perceptible similiarity of the variants of the phoneme.

The second paragraph is devoted to the phonemic System of EA vowels presented

by the spectral pictures and the results of analysis presented in the form of a table. It is noteworthy that along with the cardinal vowels (a,o,u e i) the schwa vowel/ ը / is presented. Its phonological value in the Armenian language is beyond doubt. . It is important to mention that each vowel has its own space of variability, which partially overlaps with the space of another one. In the literary EA there are no diphthongs, while sonorants have no syllabic function.

The problems of classification of consonants are discussed in the third paragraph. The functional differentiation of consonants are presented in the form of binary oppositions The author states that the so-called "compound consonants" are a subgroup of stops and are oppoused to the rest of phonemes as simple units.

In the forth paragraph the discrepancies between the written and oral forms of the Armenian language are revealed. The written form should reflect the speech articulation. Yet this relationship is often violated. It is worth mentioning that in written texts more punctuation signs are used as compared to the other languages.

The structures of the Armenian syllables are presented in the fifth paragraph. . In the EA literary language there are initial syllabic consonant sequences, realized without the vowel schwa/ ը /. All 16 types of syllables are registered (having in view the real articulation), but only 4% of them are initial consonant clusters. The author considers that they are neither borrowed results of new articulatory tendency. They go back to Old Armenian.

In the sixth paragraph binary oppositions of phonemes, including the opposition of stops and affricates (halfstops) are presented.

The second chapter is devoted to supersegmental units and consists of 8 paragraphs.

The minimal differentiating unit of this level is the syntagm (sense group), which is allocated, separated by different prosodic means.

The second paragraph treats the function of pause in the sound chain. It is considered as a supersegmental unit, which is often met in speech and is characterized by different functions.

There are three types of pause: short (up to 100msec (milliseconds), middle (up to 500msec) and long (over 500msec).

In the third and forth paragraphs the problems of tempo are discussed, both in theoretical as well as practical aspects. In the last one are presented the results of the experiments which have been carried on at the laboratory of experimental phonetics, Institute of Linguistics Armenian Academy of Scinces. As experimental material identical texts in Armenian and Russian were chosen to be read by the best announcers of Radio and Television in both languages . There were also chosen spontaneous speech samples of speakers in both languages.

It is revealed that the Armenian speech is generally characterized by slower tempo as compared to that of Russian. The tempo of speech of the Radio and TV announcers of speech in Armenian is compearatively faster.

In the fifth and sixth paragraphs the problems of rhythm are treated. As a rhythmical unit the author takes an organized sequence of stressed and unstressed syllables chosen, from both prose and poetry of wellknown Armenian authors.. If the rhythm of poetry is characterized by the sequance of stressed syllables and strophe, the rhythm of prose is characterized by the time factor that is the segments tend to be level in duration..In the text of prose, selected from Armenian folklore occur more speech segment replays, which can be considered as rhythmical units.

The seventh paragraph is devoted to the stress. The Armenian word stress is of dynamic nature, which is confirmed by the experimental data. As to the place of stress it is fixed on the last syllable of the word with a few exceptions. Words, containing more then 6 sylablles, are characterized by the secondary stress. The fixed stress tendency in the Armenian language is maintained in newly coined and borrowed words of modern East Armenian.

Besides word stress there also exists syntagmatic, phrase stress or sentence stress. The syntagmatic stress is characterized by more conspicuous stress as compared to word stress. It is remarkable that in the syntagmatic stress and especially sentence stress besides dynamic factors there appears the importance of time factor.

The last paragraph of this chapter is devoted to the problems of tembre. This is an individual feature of speakers. Its influence on the production and perception of speech is hardly explored. In the speech specter it is characterized by the higher formants {the third, forth and higher formants). Yet the linguistic aspects of speech go parallel with these individual peculiarities and do not influence (or hardly in influence) the connotation of speech.

In the “Summary” the author gives the results of his investigation, and as a prognosis he speaks of the discrepancies existing in the phonology of both Armenian literary languages and the perspectives of its elimination.